Azg Ազգ

11 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2012 ԵՐԵՔՇԱԲԹԻ 157(5009)

ISSN: 1829-1651

ՀԲԸՄ-ն կոչ է անում շուտափույթ օգնելու սիրիահայ համայնքին

Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ) դիմում է սփյուռհայությանն ու կոչ անում բոլորին՝ օգնության ձեռք մեկնելու ճգնաժամային պայմաններում գտնվող սիրիահայությանը: Սիրիայում ստեղծված տագնապալի իրավիճակի պատճառով բազմաթիվ հայեր կորցրել են իրենց բնակավայրերն ու աղրուսի միջոցները, հարյուրավոր սիրիահայեր ստիպված լքել են իրենց տներն ու ապաստանել Հայաստանում եւ շրջակա երկրներում:

Թեեւ ՀԲԸՄ-ն մարդասիրական օգնություն արդեն հասցնում է տեղի սիրիահայ համայնքին, բայց նկատի ունենալով դեպքերի արագ ընթացքն ու դրության անընդհատ վատթարացումը՝ կոչ է անում, որ օգնությունը լինի շուտափույթ:

ՀԲԸՄ կենտրոնական վարչական ժողովի անդամ **Վազգեն Յագուպյանը**, որը Դամասկոսից է, նշում է. «Սիրիահայ երբեմնի բարգավաճ գաղութն այժմ բոլորիս աջակցության կարիքն ունի: Միության մասնաճյուղերն այժմ նաեւ համագործակցում են «Սիրիահայ օգնության համակարգումի մարմնի հետ», որը համախմբում է տեղական բոլոր հայկական կազմակերպությունների ներկայացուցիչներին»:

Ուղարկած հաղորդագրության մեջ միությունը հույս է հայտնում, որ կոչը շուտափույթ արձագանքներ կունենա:

Ի. Պ.

Հայ շախմատիստները՝ օլիմպիական եռակի չեմպիոններ

ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ստամբուլում անցկացված շախմատի համաշխարհային 40-րդ օլիմպիադան ավարտվեց հայկական շախմատի նոր փառահեղ նվաճմամբ: Հայաստանի տղամարդկանց հավաքականն ավարտական տուրում 2,5-1,5 հաշվով պարտության մատնելով հունգարացիներին, 11 մրցախաղերում վաստակեց 19 միավոր եւ լրացուցիչ գործակիցներով գերազանցելով նույնպիսի արդյունքի հասած ռուսներին, նվաճեց օլիմպիադայի չեմպիոնի տիտղոսը: Վերջին 4 օլիմպիադաներում հայ շախմատիստները 3-րդ անգամ օլիմպիական չեմպիոն հռչակվեցին: Սա վկայում է մեր շախմատիստների մտավոր մեծ ներուժի, խաղային բարձր որակների, թիմային ոգու մասին, որ Ստամբուլում դրսեւորեցին **Լեւոն Արոնյանը, Սերգեյ Մովսիսյանը, Վլադիմիր Հակոբյանը, Գաբրիել Սարգսյանն** ու **Տիգրան Պետրոսյանը**: **Նրանք մեկ անգամ եւս ապացուցեցին, որ Հայաստանը վերջին տասնամյակում իրոք ուժեղագույնն է շախմատային աշխարհում: 1992-ից մասնակցելով հա-**

Նրանք իրենց ստահակ մարդասպանին են պատվով դիմավորում, մենք՝ մեր տաղանդներին

մաշխարհային 11 օլիմպիադաների, Հայաստանի տղամարդկանց հավաքականը 6 անգամ դարձել է մրցանակակիր՝ 3 անգամ էլ արժանանալով բրոնզե պարգեւների: Լեւոն Արոնյանը, Վլադիմիր Հակոբյանն ու Գաբրիել Սարգսյանը դարձան օլիմպիական եռակի չեմպիոններ, ինչը համաշխարհային շախմատի պատմության մեջ քչերին է հաջողվել: Տիգրան Պետրոսյանի համար այս հաջողությունը 2-րդն էր, իսկ Սերգեյ Մովսիսյանն առաջին անգամ նվաճեց օլիմպիական ոսկե մեդալը:

Երեկ երեկոյան օլիմպիադայի հերոսները վերադարձան Ստամբուլից: Օդանավակայանում մեր շախմատիստներին անձամբ դիմավորեց հանրապետության նախագահ, շախմատի Հայաստանի ֆեդերացիայի նախագահ Սերժ Սարգսյանը: Այստեղ հավաքված բազմությունը ջերմորեն դիմավորեց ազգի հերոսներ դարձած մեր շախմատիստներին, որոնք արժանի են փառք ու պատվի:

Ազատության հրապարակում մեր չեմպիոնների պատվին տոնական համերգ էր կազմակերպվել, որն ավարտվեց հրավառությամբ: Այնուհետեւ հավաքականն ուղեւորվեց նախագահական նստավայր, որտեղ տոնական ընդունելություն էր կազմակերպվել: ՀՀ նախագահը շնորհավորելով շախմատիստներին հերթական փառահեղ հաղթանակի առիթով, նրանց պարգեւատրեց շքանշաններով: Հավաքականի գլխավոր մարզիչ Արշակ Պետրոսյանն ու Լեւոն Արոնյանը պարգեւատրվեցին «***Սուրբ Մեսրոպ Մաշտոց***» **շքանշանով, իսկ Վլադիմիր Հակոբյանը, Սերգեյ Մովսիսյանը, Գաբրիել Սարգսյանն ու Տիգրան Պետրոսյանն արժանացան Պատվո շքանշանի:**

Տես էջ 7

Ռաֆֆի Հովհաննիսյանը, Վիկտոր Դալլաքյանը եւ ընդդիմության իրավունքները

«Ժառանգություն» խմբակցությունն՝ առանց Ռաֆֆի Հովհաննիսյանի

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երեկ Ազգային ժողովի 5-րդ գումարման երկրորդ նստաշրջանն էր: Ու թեեւ բոլորը սպասում էին, որ դեռ անցած արտահերթ նիստում մանդատից հրաժարվելու դիմում ներկայացրած ՀՀԿ-ական Ռուբեն Հայրապետյանը կգա Ազգային ժողով ու հետ կվերցնի իր դիմումը, քանի որ այդպես էր նա խոստացել «Նուվել դ'Արմենի» պարբերականին ավելի վաղ տված եւ շաբաթ օրը հայկական մեդիատարածքում հայերեն հրապարակված հարցազրույցում, բայց մանդատախաղն «այլ կողմանե» եղավ: Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը նստաշրջանի սկզբում հայտարարեց, որ «Ժառանգությունից» Ռաֆֆի Հովհաննիսյանը հրաժարվում է պատգամավորական մանդատից: Թեստը նույնն է՝ եթե Ռ. Հովհաննիսյանը դիմանա եւ 15 օրվա մեջ հետ չվերցնի հրաժարականի դիմումը, նա այլեւս պատգամավոր չի լինի, եւ ըստ կուսակցության աղբյուրների «Ժառանգության» ցուցակով խորհրդարան կգա բոլորովին էլ ոչ զտարյուն ժառանգական, այլ «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ի ղեկավար Թեւան Պողոսյանը: Թե ինչ հիմնավորմամբ էր հրաժարվել Ռ. Հովհաննիսյանը՝ «Ժառանգության» պատգամավորները հղում էին անում կուսակցության հայտարարությանը, որտեղ ընդամենը նշված է, որ կիրակի օրը տեղի ունեցած վարչության նիստում բավարարվել է Ռ. Հովհաննիսյանի՝ մանդատից հրաժարվելու ցանկությունը, վարչությունը ընդառաջ է գնացել նրա դիմումին:

Տես էջ 3

Զինվորն ինքնասպանություն է գործել

ՀՀ ՊՆ ճնշական ծառայության փոխանցմամբ՝ կիրակի գիշեր՝ ժամը 02:15-ի սահմաններում Քանաքեռի զորամասում ժամապահի պարտականությունները կատարելիս՝ պահակային ծառայությունում հայտնաբերվել է զինծառայող Արման Սարգսյանի դին: Նախնական տվյալներով՝ զինծառայողն ինքնասպանություն է գործել:

Օդերատիվ ճնշական խումբը մեկնել է դեպքի վայր, կատարվել են զննություն եւ ճնշական այլ գործողություններ, նշանակվել են մի շարք փորձաքննություններ: Փաստի առթիվ ՀՀ ՊՆ ճնշական ծառայության 4-րդ կայազորային բաժնում հարուցվել է քրեական գործ ՀՀ ՔՕ 110 հոդվածի առաջին՝ «Ինքնասպանության հասցնելու», հատկանիշներով:

Արման Սարգսյանը զորակոչվել էր ծառայության 2011թ. գարնանը Աշոցքի զինկոմիսարիատից: Նա Բյուրակնի ընտրված գյուղապետ Սեյրան Սարգսյանի որդին է:

Հ. Հ.

ՄԻՊ-ից՝ ՏԻՄ ընտրությունների մասին

Ըստ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի տարածած հայտարարության՝ ՏԻՄ ընտրությունների վերաբերյալ պաշտպանի գրասենյակը ստացել է 37 ահազանգ: Դրանցից 11-ը Շիրակի մարզից է եղել, 25-ը՝ Լոռու մարզից, եւ 1-ը՝ Սյունիքից, որոնցից 15-ին ՄԻՊ գրասենյակն արագ արձագանքել է: Դրանք հիմնականում վերաբերել են դրոշմակնիքների ժամանակից շուտ անհետացմանը կամ ընդհանրապես չանհետացմանը, ընտրատեղամաս մուտքը խոչընդոտելուն, ընտրակաբառք բաժանելուն կամ բաժանման խոստմանը (1 դեպք), կուսակցություններին, կողմնակի անձանց ներկայությանն ընտրատեղամասում եւ այլն: Ստացված ահազանգներն ուսումնասիրման փուլում են, որից հետո կհարուցվեն համապատասխան վարույթներ:

Մ. Խ.

Վաշինգտոնը բացատրություն է սպասում Բուդապեշտից եւ Բաքվից

«Ռամիլ Սաֆարովի գործում Ադրբեջանը հարված հասցրեց միջազգային արդարադատությանը»: Գնահատականը ՀՀ գլխավոր դատախազ **Աղվան Հովսեփյանինն** է, ինչեցրած դատախազությունում ԱՄՆ դեսպան **Ջոն Հեֆերնի** հետ իրավական ոլորտում հայ-ամերիկյան համագործակցությունը շարունակելու մասին փաստաթղթի ստորագրման արարողությունից հետո:

«Խոսքը մի պետության կայացրած որոշումը մեկ այլ պետության կողմից կատարելու մասին է: Եվ դա այն ժամանակ, երբ բոլոր հանդիպումներին, կոնֆերանսներին ճնարկվում էր համագործակցության աշխուժացման հարցը: Գլխավոր դատախազը փաստում է, որ ոչ թե ներում է տեղի ունեցել, այլ՝ հանցագործի արդարացում, քանի որ հենց արդարացման դեպքում են հանցագործին բարոյական եւ նյութական վնասի փոխհատուցում տրամադրում՝ աշխատավարձ, կոչման բարձրացում:

«Ադրբեջանում ոչ միայն վնասն է փոխհատուցվել, այլեւ մարդասպանը վերածվել է հերոսի: Ցավալի է, որ Երկիր մոլորակում ազգ կա, որի ներկայացուցիչը հերոսի է վերածվում միայն այն բանի համար, որ կացնահարել է ճնած մարդուն»:

Կատարվածը ոչ միայն մարդկային արժեքների ոտնահարում է, այլեւ խախտում է իրավական դաշտի մի շարք օրենքներ. դատախազի մեկնաբանությամբ՝ ոչ մի նախագահ իրավունքի չունի ներելու այլ պետության դատարանի կողմից դատապարտված մարդուն՝ առանց դատարանի թույլտվությամբ: «Դա կողքից սխալ է, որը խախտում է Ադրբեջանի ՔՕ 521 հոդվածը: Իլհամ Ալիեւը չի սպասել ադրբեջանական դատարանի որոշմանը, չնայած հանցագործին կարող էր արդարացնել միայն դատարանը, այլ ոչ թե նախագահը»:

ԱՄՆ դեսպան Ջեն Հեֆերնը հավելել է, որ ԱՄՆ-ն Ռամիլ Սաֆարովի հետ կապված զարգացումների առումով բացատրություն է սպասում Բուդապեշտից եւ Բաքվից: «Ուզում եմ կրկին հաստատել, որ ԱՄՆ-ն, իբրեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ, դեմ է դրսեւորումներին, որոնք սպառնալիքի տակ են դնում բանակցային փխրուն գործընթացը: Մենք Բուդապեշտից եւ Բաքվից բացատրություններ ենք ակնկալում եւ հետեւողական կլինենք դրանք ստանալու հարցում», եզրափակել է դեսպանը:

Հ. Հ.

ԱԶԳ

Ընթացիկ

Երեւանցիների համա՞ր, թե՞ երեւանցիների հաշվին

Անցումներ կառուցելը լավ գործ է, բայց ...

Երեւանի քաղաքապետարանը այս տարի փողոցների ասֆալտապատման եւ բարեկարգման մեծածավալ ծրագրեր իրականացրեց, որոնք գոհունակությամբ ընդունեցին երեւանցիները: Ընթացքի մեջ են նաեւ նոր ճանապարհների կառուցման աշխատանքները, որոնք պետք է թեթեւացնեն երթեւեկությունը ծանրաբեռնված փողոցներում: Դրանցից մեկը Լենինգրադյան փողոցն ու Իսակովի պողոտան միմյանց կապող նոր ճանապարհն է, որին անդրադարձել ենք նաեւ մեր թերթում, եւ որի շինարարության ընթացքին, բնակության վայրի բերումով, հետեւում եմ ամեն օր:

Որ վերոնշյալ ճանապարհի կառուցումը դրական նշանակություն կունենա բոլոր երեւանցիների, ինչպես նաեւ մայրաքաղաքին հարող տարածքների բնակիչների համար՝ Աջափնյակ եւ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանները միացնելով Կենտրոնին, ակնհայտ է, բայց չենք կարող չնշել մի քանի հանգամանք, որոնք փչացնում են կարեւոր նախագծերի իրականացումից ակնկալվող դրական արդյունքը:

Առաջինը Լենինգրադյան փողոցում կառուցվող նոր վերգետնյա անցումն է, որը ինքնին դարձյալ դրական քայլ է եւ խիստ անհրաժեշտ ինչպես ուղեւորների, այնպես էլ տրանսպորտային միջոցների համար: Սակայն կառուցելուց առաջ հարկ է ուսումնասիրել եւ հաշվի առնել գոյություն ունեցող իրողությունները, որպեսզի կառուցածը ծառայի նպատակին, ոչ թե նոր դժգոհությունների տեղիք տա: Այս վերգետնյա անցման դեպքում նախագծողները մոռացել են այդ մասին: Դե, կարեւորը պատվերը, ապա ֆինանսավորումը ստացել են՝ կամ պետական բյուջեից կամ քաղաքային, հերն էլ անիծած, թե կառուցելուց հետո անցումը կծառայի՞ իր նպատակին, թե՞ չէ:

Ուրեմն, անցումը կառուցվել է կանգառից եւ նախկին գծանշած անցումից բավականին հեռու: Ինչը միայն մասամբ օգտագործելի է դարձնում այն, քանի որ օգտվում են միայն այն մարդիկ, ովքեր աշխատանքի չեն շտապում եւ այս կամ այն համարի տրանսպորտից ուշանալու խնդիր չունեն: Երեւանյան ողորմելի վիճակում գտնվող տրանսպորտից օգտվողները շարունակում են փողոցը հատել նախկին անցումի տեղից, քանի որ մոտ է կանգառին: Ի դեպ, կանգառում վաղուց արդեն աղբարկղ չկա, եւ ծխախոտի մնացորդները «զարդարում են» փողոցի երկայնքով տնկված ծառերի փոսերը:

Բացի սրանից, անցումը կառուցվել է բնակելի շենքերից հեռու, ինչը եւս մեկ պատճառ է, որ մարդիկ չցանկանան օգտվել դրանից: Մի՞թե Երեւանի քաղաքապետարանում ոչ ոք Լենինգրադյան փողոցի շենքերի գտնվելու վայրը չտեսավ: Փաստորեն, տեսողության խնդիրներ ունի ոչ միայն քաղաքապետարանի տրանսպորտի վարչության պետը, որը ոչ մի կերպ չի տեսնում

Երեւանի տրանսպորտի խայտառակ վիճակը, այլ նաեւ ճարտարապետության եւ քաղաքաշինության, շինարարության եւ բարեկարգման վարչությունների պետերը, որոնք չեն տեսնում, թե որտեղ են բնակելի շենքերը, որտեղ է կանգառը, եւ կառուցում են անցումը ըստ սեփական հարմարության:

Ինչեւէ, անցումն արդեն կառուցված է ոչ ճիշտ տեղում եւ այլեւս տեղափոխել չի լինի: Մնում է միայն կանգառը մոտեցնել անցումին, այնուհետեւ ծածկ տեղադրել նրա վրա: Հետաքրքրական է, վերգետնյա անցման նախագծողները չգիտե՞ն, որ Երեւանում ամռանը կիզիչ արեւ է լինում, աշնանն ու գարնանը անձրեւներ են գալիս, իսկ ձմռանը՝ որքան էլ զարմանալի է նրանց համար՝ ձյուն: Մարդիկ, որոնք, այնուամենայնիվ, հարկադրված պետք է օգտվեն վերգետնյա անցումից, գոնե իրենց գլխավերեւում ծածկ պետք է ունենան: Հիշեցնենք, որ 21-րդ դարում ենք, գիտությունն ու տեխնոլոգիաները շատ են զարգացել, եւ վաս չէր լինի, որ մեր անցումները աղահովված լինեն ծածկով:

Այժմ անցնենք Լենինգրադյան փողոցի մյուս ծայրը՝ մարզահամերգային համալիրի մոտ, որտեղ կառուցվում է ստորգետնյա անցում արդեն մեքենաների համար: Արդեն մի քանի ամիս է, ինչ այդ անցումը կառուցվում է եւ շինարարական աշխատանքների պատճառով այդ հատվածում մեքենաների երկու հանդիպակաց հոսքերով անցնելու համար թողնված է ընդամենը 4-5 մետր լայնությամբ տարածք: Թե ինչ խցանումներ են լինում այստեղ օրվա գրեթե բոլոր ժամերին, դժվար չէ ենթադրել: Հասկանալի է, որ շինարարության ժամանակ անխուսափելի են նման սահմանափակումները, բայց շինարարության ժամանակ: Ցերեկվա բոլոր ժամերին անցնելիս, վերջին երկու-երեք շաբաթների ընթացքում այստեղ շինարարական աշխատանքեր չեն կատարվում: Փոխանակ այս անցումը առաջնահերթ եւ արագ կառուցելու, խցանումները վերացնելու եւ երեւանցիներին նյարդերի քայքայումից եւ ժամանակի անիմաստ կորուստից ազատելու, քաղաքապետարանը հայտնի չէ, թե ինչով է զբաղված: Իր շրջայցերի ժամանակ, Երեւանի քաղաքպետ Տարոն Մարգարյանն այս հատվածում չի՞ լինում, չի՞ տեսնում խցանումներն ու կանգ առած շինարարությունը:

Մի խոսքով, ցավոք, արդեն տխուր ավանդույթ է դարձել, երբ որեւէ լավ գործ կամ նախագիծ վարկաբեկվում է իրականացնողների պատճառով, եւ մեր ներկայացրածը ընդամենը մեկ օրինակ է այդ գործելաոճի:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հիմնովին նորոգվել է Շուշիի Խ. Աբովյանի անվան դպրոցը

Սեպտեմբերի 8-ին «Հայաստան» համահայկական հիմնադրամը բացեց Շուշիի Խաչատուր Աբովյանի անվան դպրոցը: Կրթօջախը հիմնովին վերակառուցվել է Ռուսաստանի հայ համայնքի ու Լեռնային Ղարաբաղի կառավարության համաֆինանսավորմամբ:

«Հայաստան» հիմնադրամից տեղեկացանք, որ բացման արարողությանը ներկա են եղել Հայաստանի ու ԼՂՀ նախագահները, «Հայաստան» հիմնադրամի գործադիր տնօրենը, բարձրաստիճան պատգամավորներ, հյուրեր եւ այլք:

Դպրոցում նաեւ բացվել է 2 համակարգչային դասասենյակ՝ հովանավորությամբ հիմնադրամի ԱՄՆ արեւելյան շրջանի տեղական մարմնի, իսկ մյուս դասասենյակները, դահլիճն ու սպորտդահլիճը կահավորվել են հիմնադրամի Իտալիայի նորաստեղծ գրասենյակի

ջանքերով հանգանակած գումարներով:

Ներկայումս դպրոցում սովորում է ավելի քան 330 աշակերտ, դպրոցի ամբողջական նորոգումը նաեւ նպատակ ունի վերականգնելու նախկինում այստեղ սովորող աշակերտների թիվը, որը հասնում էր 1200-ի:

Ի. Պ.

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեղական ընտրությունները՝ նախնական տվյալներով

Սեպտեմբերի 9-ին Սյունիքում, Շիրակում, Արմավիրում, Լոռիում, Արարատում տեղի ունեցած ՏԻՄ ընտրություններին 968 643 ընտրողներից մասնակցել 479625-ը կամ ընտրողների 49,5 տոկոսից մի փոքր ավելին: Նախնական արյունքների ընդհանուր պատկերը կա, առավել ճշված նախնական արդյունքները կհրապարակվեն 4 օր հետո: Մեկ-երկու հեռաքրքրական նախնական արդյունք ներկայացնենք.:

Ըստ ԿԸՀ-ի հրապարակած նախնական տվյալների՝ Գյումրիում 125 657 ընտրողներից 46093-ը մասնակցել է ընտրություններին, Սամվել Բալասանյանը ստացել է 27500 քվե, Հովսեփ Սիմոնյանը (ՀՅԴ)՝ 10281, Սպարտակ Պետրոսյանը՝ 2130, անվավեր է ճանաչվել 3359 քվեաթերթիկ:

Իսկ Վանաձորի քաղաքպետ, էլի նախնական տվյալներով, ընտրվել է մինչեւ այժմ էլ քաղաքպետ եղած Սամվել Դարբինյանը: Այդ մասին հայտարարություն էր տարածել երեկ Սամվել Դարբինյանի նախընտրական շտաբը:

Իսկ ահա Մասիսի քաղաքապետի ընտրություններից (որտեղ նախնական տվյալներով հաղթել է նախկին ՀՀԿ-ական քաղաքպետ Սաշա Հակոբյանը՝ 5248 ձայնով) դժգոհ է մնացել Մասիսի քաղաքապետի ԲՀԿ-ական թեկնածու Կարապետ Օհանյանը, որի եւ ՀՀԿ-ական թեկնածուի ձայների տարբերությունը 550 է, 500 քվեաթերթիկ էլ անվավեր է ճանաչվել: Երեկ նա դիմել է ԿԸՀ՝ որոշ տեղամասերում վերահաշվարկի պահանջով: Հիշեցնենք, որ 4789 թեկնածու էր պայքարում ավագանու եւ համայնքի ղեկավարի տեղերի համար, նրանցից 714 մարդ ցանկանում էր համայնքի ղեկավար դառնալ:

ՏԻՄ ընտրությունների նախնական արդյունքների մասին այլ մանրամասներ դեռ կներկայացնենք:

Մ. Խ.

Սամվելը բալասան կդնի՞ Գյումրու վերքերին

Քաղաքում ընտրողների մեծ ակտիվություն չի եղել

Եվ այսպես, ըստ սեպտեմբերի 9-ին կայացած ՏԻՄ ընտրությունների նախնական արդյունքների, հանրապետության երկրորդ քաղաք Գյումրու նոր քաղաքպետ է ընտրվել Ազգային ժողովի ԲՀԿ-ական պատգամավոր Սամվել Բալասանյանը: Նրա օգտին քվեարկել է 27624 ընտրող կամ քվեարկությանը մասնակցած գյումրեցիների ընդհանուր թվի 64,96 տոկոսը:

Հիշեցնենք, որ Բալասանյանին առաջադրել էր «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, նրա թեկնածությանը հավանություն տվել եւ պատշտպանում էին ՀՀ նախագահն ու իշխող Հանրապետական կուսակցությունը: Գյումրիում քաղաքպետի պաշտոնի համար պայքարում էին չորս թեկնածուներ, որոնցից երկրորդ ցուցանիշն ունեցած դաշնակցական թեկնածու Հովսեփ Սիմոնյանը ստացել է 10 346 քվե կամ 24,37 տոկոս ձայն:

Քաղաքի բոլոր 79 ընտրատեղամասերում միասին ընտրությանը մասնակցել է 46 հազար 93 մարդ, մասնակցության ցուցանիշը կազմել է 36,7 տոկոս: Կրկնենք, բերված բոլոր թվերը նախնական են եւ ենթակա են փոփոխության: Ընտրվել է նաեւ Գյումրու համայնքային ավագանի, որի անդամության 21 տեղերի համար պայքարում էին 71 թեկնածուներ: Նրանց թվում «Քաղաքը մերն է» քաղաքացիական նախաձեռնության միասնական թիմի 7 թեկնածուներից առավել թվով ձայներ ստացել ու Գյումրու ավագանու անդամ է դարձել միայն մեկը՝ Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ Լեւոն Բարսեղյանը: Քաղաքի տարբեր թաղամասերում մեր այցելած մի քանի ընտրատեղամասերում քվեարկությունն ընդհանուր առմամբ հանգիստ ընթացք ուներ, հանձնաժողովականներից, վստահված անձանցից, դիտորդներից ու ընտրողներից լուրջ դժգոհություններ, բողոքներ չլսեցինք: Բայց դա չի նշանակում, որ միջադեպեր, խախտումներ ու թերություններ չեն եղել: Նման դեպքերի, այդ թվում կաշառքի բաժանման վերաբերյալ ահազանգեր, հիմնականում՝ տարբեր լրատվամիջոցների կողմից, նույնպես եղել են, դրանք համապատասխան մարմիններն ուսումնասիրում են:

Մարզի երկրորդ քաղաք Արթիկում ՀՀԿ-ական երկու թեկնածուներից առավել թվով քվեներ ստացել եւ քաղաքպետ է դարձել Արամայիս Աբրահամյանը՝ գերազանցելով գործող քաղաքպետ Խաչատուր Վարագյանին:

Ընդհանուր առմամբ, Շիրակում սեպտեմբերի 9-ին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ են տեղի ունեցել մարզի 119 համայնքներից 113-ում, այդ թվում նաեւ 84 գյուղական համայնքներում՝ համայնքի ղեկավարի, 100-ում՝ ավագանու: Շատ տեղերում դրանք երկուսը միասին են եղել:

Գ. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱԻԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Չեխահայերը բողոքեցին Հունգարիայի դեսպանատան առջեւ, իսկ Չեխ արտգործնախարարը պատասխանեց հայերին

Մոտ 100 հայեր սեպտեմբերի 8-ին Պրահայում Հունգարիայի դեսպանատան առջեւ կազմակերպված հսկում-ցույցին եկել էին հակաադրբեջանական ու հակահունգարական լոզունգներով ու նկարներով, ինչպես նաեւ Հայաստանի դրոշներով, Գուրգեն Մարգարյանի լուսանկարներով: Դեսպանության շենքը շրջապատված էր ոստիկաններով ու վարժեցված շներով: Քանի որ չեխահայերին ցույց կազմակերպելու թույլտվություն տվել էին շաբաթ օրվա համար, այդ օրը հունգարական դեսպանության լուսամուտները լրիվ փակված էին, որեւէ աշխատակից այդպես էլ դուրս չեկավ դեսպանատան տարածից:

«Մեր այս բողոքն ուղղված է ոչ թե բարեկամ հունգար ժողովրդի, այլ պատշոնական Բուդապեշտի անազնիվ եւ անխոհեմ քայլի դեմ», «Ամո՛թ Հունգարիայի կառավարությանը», «Ամո՛թ վարչապետ Օրբանին», «Վաճառքի է հանվել Հունգարիան», «Բանտարկե՛լ մարդասպան Սաֆարովին», այս եւ նմանատիպ այլ կոչեր հնչեցին: Չեխահայ ցուցարարները չեխերենով եւ անգլերենով մի քանի անգամ ընթերցեցին հայ համայնքի պահանջները: Դատապարտելով կատարվածը՝ չեխահայ համայնքը պահանջեց մարդասպան Սաֆարովին բանտարկել եւ, իբրեւ պատասխան Ադրբեջանի ստոր քաղաքականության, ճանաչել ԼՂՀ անկախությունը՝ այդպիսով վերականգնելով Հունգարիայի սվերված վարկը:

«Չեխահայությունը կոչ է անում միջոցներ ձեռնարկել, որ Սաֆարովը իր պատիժը կրի: Դա կլինի միակ ճանապարհը՝ թուլացնելու լարվածության ուժեղացումը ողջ տարածաշրջանում: Այլապես Սաֆարով-մարդասպանի մեծարումը Ադրբեջանի կողմից անպատասխանատու սադրանք է, պարունակելով Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ պատերազմի բռնկման վտանգը, հատկապես եթե նկատի ունենանք, որ վերջին շրջանում Ադրբեջանը հայ-ադրբեջանական սահմանային գոտում հաճախ է խախտում զինադադարը», գրված էր Հունգարիայի դեսպանությանն ուղղված բողոք-նամակում:

Չեխահայերը պահանջեցին նաեւ զգաստության եւ լարվածության թուլացման կոչերում հավասարության նշան չդնել երկու կողմերի միջեւ, քանի որ՝ բանակցությունների վիժեցումը, նախապես կնքված պայմանավորվածություններից հետ կանգնելը Ադրբեջանի որդեգրած քաղաքականությունն է հակամարտության ողջ ընթացքում:

Չեխիայի խորհրդարանի ներկայացուցիչների պալատի 45-րդ նիստում սեպտեմբերի 6-ին Չեխիա-Հայաստան պատգամավորական բարեկամական խմբի ղեկավար Ռոբերտ Բոհնիշը հարց էր ուղղել Չեխիայի փոխվարչապետ եւ արտգործնախարար Կարել Շվարցենբերգին, որում անդրադարձել էր Ռամիլ Սաֆարովի փոխանցման եւ ներման դեպքին՝ փորձելով ճշտել Չեխիայի դիրքորոշումը այս հարցում:

Կարել Շվարցենբերգը պատասխանել է. «Չեխիայի Հանրապետությունը տվյալ հարցում Հայաստանի կողմն է: Մեր դիրքորոշման եւ զորակցության մասին արդեն տեղեկացրել ենք Հայաստանի դեսպանին: Սաֆարովը դատապարտված մարդասպան է, սպանությունը մնում է սպանություն, եւ այն, ինչ տեղի ունեցավ, ծաղրանք է զոհվածի հարազատների, արդարության եւ իրավունքի գերակայության սկզբունքների հանդեպ: Մենք խորապես մտահոգված ենք Ադրբեջանի կառավարության քայլերով, որի մասին տեղեկացրել ենք նաեւ իրենց՝ Պրահայի դեսպանության միջոցով: Չեմ կարծում, որ սա միայն Հունգարիայի, Ադրբեջանի եւ Հայաստանի կառավարությունների հարցն է: Ողջ միջազգային հանրությունը խորապես մտահոգված է հատկապես Ադրբեջանի գործողություններով: Ադրբեջանի հեղինակությունը եւ իմիջը խիստ վնասված են»: Շվարցենբերգը նաեւ ավելացրել է, որ Ադրբեջանի գործողությունները վնասում են ղարաբաղյան հակամարտության կողմերի միջեւ վստահությունն ամրապնդելու միջազգային հանրության ջանքերին, թուլացնում խաղաղ բանակցությունների գործընթացը եւ, ի վերջո, վնասում Ադրբեջանին:

Նա նաեւ շեշտել է իրավիճակի հետագա սրումը կանխելու կարեւորությունը եւ դրական գնահատել Հայաստանի կառուցողական դիրքորոշումը՝ բանակցությունները շարունակելու առումով, ինչպես նաեւ ասել, որ հարցին անդրադառնալու են ԵՄ անդամ պետությունների արտաքին գործերի նախարարները Նիկոսիայում կայանալիք ոչ-պաշտոնական հանդիպման շրջանակներում:

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ
Պրահա

Բելգիահայ համայնքը բողոքում է

Սեպտեմբերի 8-ին Բելգիայի տարբեր քաղաքներում ապրող հայեր հավաքվել էին Բրյուսելում:

Բելգիահայությունը եւս, միանալով աշխարհասփյուռ հայերի բողոքին, իր վրդովմունքն էր հայտնում Հունգարիային ադրբեջանցի մարդասպան Ռամիլ Սաֆարովի հանկարծակի արտահանձնման եւ Ադրբեջանում ոճրագործին ներում շնորհելու եւ հերոսացնելու համար:

Բրյուսելի՝ Եվրոմիության հարակից տարածքում տեղակայված Հունգարիայի մշտական ներկայացուցչության ատյանի առջեւ վաղ առավոտից հայերը հայկական դրոշակներով, Հունգարիայի կառավարությանն ուղղված պաստառներով ամոթանքի խոսքեր էին վանկարկում հունգարական կողմին:

Եվրոպայի Հայ դատի բելգիական մասնաճյուղի, ՀՅԴ կուսակցության, «Հայասա» ուսանողական միության, «Համազգային» կրթական եւ մշակութային միության ինչպես նաեւ բելգիահայ համայնքի կողմից գրավոր հղում ներկայացվեց Հունգարիայի արտաքին գործերի նախարարությանը, որում հիշեցվում է 1983-ի Ստրասբուրգի կոնվենցիան՝ արտահանձման վերաբերյալ: Բելգիահայությունը խստորեն դատապարտում է հունգարական կառավարության անարդար քայլը, որի հետեւանքով մարդասպանն Ադրբեջանում գտնվում է ազատության մեջ եւ ազգային հերոսի համբավ է վաստակել: Բարոյականության եւ արդարության այսպիսի ոտնահարումով Ադրբեջանը իր իրական դեմքը բացահայտեց աշխարհին: Հունգարիան իր քայլով խրախուսում է ադրբեջանցիներին եւ նոր սադրանքների նախադրյալներ ստեղծում:

Վերջում հայ ցուցարարները կոթեկներ նետեցին շենքի ապակիներին, ինչը ոստիկանների անհանգստության առիթ հանդիսացավ: Սակայն մեր հայրենակիցները կազմակերպված, առանց ավելորդ անախորժությունների հեռացան:

ԱՐԱՔՍ ՍԱՖԱՐՅԱՆ
Բրյուսել

Ցույց Բեռլինում

Սեպտեմբերի 8-ին Բեռլինի կենտրոնում՝ Հունգարիայի դեսպանատան առջեւ, Գերմանիայի հայ համայնքը կազմակերպեց բողոքի ցույց 2004 թվականի փետրվարի 19-ին Բուդապեշտում հայ սպա Գուրգեն Մարգարյանին սպանած Ռամիլ Սաֆարովին ինչպես Հունգարիայի կողմից ադրբեջանական իշխանություններին տրամադրելու, այնպես էլ ադրբեջանի նախագահի կողմից մարդասպանին անհիմն ազատ արձակման դեմ: Հայկական համայնքի հետ բողոքին էր միացել նաեւ Ցեղասպանության ճանաչման աշխատանքային խումբ գերմանական հասարակական կազմակերպությունը:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Ռաֆֆի Հովհաննիսյանը, Վիկտոր Դալլաքյանը եւ ընդդիմության իրավունքները

1-ին էջից

Սակայն ուղղակի փաստերի արձանագրությունից ստացվում է տխուր պատկեր: «Ժառանգություն» խմբակցության միակ ժառանգականն այժմ Զարուհի Փոստանջյանն է, որը, ըստ տարբեր աղբյուրների, վարչությունից միակն է եղել, որ համաձայն չէր «Ազատ դեմոկրատների» հետ միասնական ցուցակով ընտրությունների գնալու: Մնացածները՝ խմբակցության ղեկավար Ռուբիկ Հակոբյանը, ազատդեմոկրատականներ Ալեքսանդր Արզումանյանն ու Խաչատուր Քոչարյանը եկվորներ են: Ահա այսպիսի խմբակցություն: Չի համոզում նաեւ այն ենթադրությունը, որ Ռ. Հովհաննիսյանը հրաժարվել է մանդատից, քանի որ ցանկություն ունի որպես նախագահի թեկնածու առաջադրվելու, եւ ամբողջովին նվիրվելու այդ գործին: Է. հիմա ո՞վ է արդյոք Ռ. Հովհաննիսյանը եւ ո՞ւմ է ներկայացնելու նախագահի թեկնածու առաջադրվելիս՝ գոնե կլիներ պատգամավոր կամ խմբակցության ղեկավար, իսկ հիմա...

Ազգային ժողովը՝ նախագահի նստավայրում

Ամբողջ ամառ լռության ուխտ արած Վիկտոր Դալլաքյանը, որից լրագրողներից ոչ ոք որեւէ բան չկարողացավ պոկել նրա հետագա անելիքների մասին, երեկ եկել էր խորհրդարան նոր կարգավիճակում, որպես Հայաստանի նախագահի ներկայացուցիչ Ազգային ժողովում, եւ դեռ լրագրողների հետ հաճույքով ու հանգամանալից շփվելով՝ տեղյակ պահեց, որ նշանակվելու է նաեւ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ: Նա կատակեց, թե կարդացել է մամուլի բոլոր հրապարակումները, որտեղ նրան ինչ պաշտոնում ասես նշանակել են լրագրողները. «Ձեր շնորհիվ բավական պաշտոններ եմ ստացել», ասաց՝ նշելով, որ լրագրողների հետ աշխատանքի մեծ փորձ ունի եւ շարունակելու է նրանց հետ համագործակցել: Ներում է բոլորին, ովքեր վատ-վատ բաներ են գրել իր մասին: Նա նաեւ նշեց իր բավական լայն լիազորությունների շրջանակը, որոնց մի մասը չուներ նախկին ներկայացուցիչ Գառնիկ Իսագուլյանը, եւ փաստորեն այս նոր լիազորությունները հարմարեցվել են 17 տարի պատգամավորական բովով անցած պատգամավորի մեծ փորձի էմպիրիկ կիրառման պտղաբերմանը: Սակայն Վ. Դալլաքյանն ասում էր, որ ողջ աշխարհում նախագահի ներկայացուցիչը խորհրդարանում տեսակետ արտահայտելու հնարավորություն ունի: Նրա գործառույթներն են լինելու՝ ԱԺ-ում երկրի նախագահի տեսակետների արտահայտում (ԱԺ կանոնակարգում պետք է կատարվեն համապատասխան փոփոխություններ՝ դրանք կարելիությունն պահպանվելու համար), ԱԺ-ում կատարված հայտարարությունների, հարցուպատասխանների վերլուծություն եւ այնտեղ նշված առաջարկությունների ներկայացում երկրի նախագահին: Վ. Դալլաքյանը հետեւելու է նաեւ մամուլի հրապարակումներն ու այնտեղ, ինչպես նաեւ հասարակության տարբեր շերտերի հետ հանդիպումների ընթացքում ծնված առաջարկներին օրենսդրական տեսք է տալու ու ներկայացնելու Հայաստանի նախագահին: Ընդ որում՝ Վ. Դալլաքյանն այս բոլորն անելիս պատրաստ է ԱԺ ղեկավարության եւ բոլոր խմբակցությունների հետ համագործակցել:

Ուզում են լավը, բայց ստացվում է ինչպես միշտ

Ազգային ժողովի նախագահի նախաձեռնությամբ եւ մեծամասնության առաջարկով երեկ քննարկվում էր ԱԺ կանոնակարգում փոփոխությունների նախագիծ, ըստ որոնց հնարավորություն կտրվի փոքրաթիվ խմբակցություններին ներկայացած լինելու ԱԺ 12 մշտական հանձնաժողովներից երեքում: Ավելի վաղ՝ անցյալ գումարման խորհրդարանում ընդդիմությունն առաջարկում էր 12 հանձնաժողովը դարձնել 10, որպեսզի ընդդիմությունը կարողանա արդյունավետ աշխատել հանձնաժողովներում: Դա տեղի չունեցավ, հիմա խնդիր կար, ասենք, 5 հոգուց խմբակցության արդյունավետ աշխատանքի կազմակերպում 12 հանձնաժողովում: Ընդդիմությունը, որքան էլ դա տարօրինակ թվաց Ազգային ժողովի նախագահին, նախաձեռնությունը համարեց ոչ արդյունավետ այն պատճառով, որ ամեն ուրբաթ նույն ժամին հանձնաժողովներում տեղի ունեցող նիստերին մեկ մարդ չի կարող միաժամանակ երեք հանձնաժողովում էլ ներկա լինել, եւ այս հարցի լուծմամբ մտահոգ էին Արծվիկ Մինասյանը, Ռուբիկ Հակոբյանը, Արմեն Ռուստամյանը, Աղվան Վարդանյանը, որոնք տաք ելույթներ ունեցան: Հիմնական զեկուցող Դավիթ Հարությունյանը հարցը լուծելու համար ընդդիմությունից առաջարկների ձեւակերպում էր ուզում, իսկ արտահերթ ելույթ ունեցած Հովիկ Աբրահամյանը զարմացավ՝ նշելով, որ իր համար այս բորբոքված ելույթներն անհասկանալի են, եւ օրենսդրական նախաձեռնությունը հենց նրա համար է, որ ամեն ինչ արվի ընդդիմության արդյունավետ աշխատանքի համար: Այս օրենքը քննարկվելու է հատուկ ընթացակարգով (24 ժամում), այսինքն արդեն այսօր հասկանալի կլինի՝ այնտեղ ընդդիմության առաջարկները ներառվելու են, թե մնալու է ցուցափեղկը՝ թույլտվություն, բայց ոչ իրացման հնարավորություն:

«Վասպուրական» միության հայտարարությունը

Գուրգեն Մարգարյանի սպանության համար ցմահ ազատազրկման դատապարտված Սաֆարովին այդպես լկտիորեն ներում շնորհելը մեկ անգամ եւս ցույց տվեց Ադրբեջան պետության եւ նրա ղեկավարների իրական դեմքը:

«Վասպուրական» հայրենակցական միության վարչությունը միության անդամների ձայնն է միացնում այն բոլոր առաջադեմ երկրների, կազմակերպությունների եւ անձանց բողոքին, ովքեր մեղադրեցին այս ստոր եւ անիրավ գործողությունը կատարած Ադրբեջանին:

Վասպուրականցիները համոզված են, որ գալու է վաղուց սպասված այն օրը, երբ խստագույնս պատժվելու են ոչ միայն ադրբեջանցի մարդասպանները, այլ նաեւ նրանց հովանավորները:

«Վասպուրական» հայրենակցական միության վարչություն

Մեղսակիցներ ոճրագործության մեջ

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Հայերն իրավացիորեն զայրացած են Հունգարիայում ցմահ բանտարկության դատապարտված ազերի ոճրագործ Ռամիլ Սաֆարովի արտահանձնման եւ Բաքվում իշխանությունների կողմից հերոսին վայել պատիվների արժանանալու առնչությամբ:

Այո, աշխարհով մեկ սփռված հայերը զայրացած են, բայց ո՛չ քաղաքակիրթ աշխարհը, եւ դա առավել զայրացնող է, քան միջազգային իրավունքի հանդեպ ցուցաբերված ծաղրանքը, որ Ադրբեջանի եւ Հունգարիայի կառավարությունները բեմադրեցին:

Զայրույթն ու բարկությունը, սակայն, չեն լուծելու այս լուրջ խնդիրը: Ավելի ուսանելի կարող է լինել կատարվածի խելամիտ քննարկումը եւ տեսնելը, թե ինչ դասեր կարելի է քաղել միջազգային այս սկանդալից: Աչք ծակող անօրինական արարքն իր ազդեցությունն է թողել միաժամանակ երեք գլխավոր հարթություններում. ա) Հունգարիայի ներքին քաղաքական կյանքում, բ) Հայաստանի ներքին քաղաքական կյանքում, գ) միջազգային արձագանքներում:

Պատմական ժամանակներից Հունգարիան Հայաստանին բարեկամ երկիր է եղել: Հայերը Հունգարիայում բնակություն են հաստատել երբ 11-րդ դարում սելջուկները ասպատակեցին միջնադարյան հայկական մայրաքաղաք Անին: Տարագրյալների հոսքը հայերին նախ Ղրիմ հասցրեց, այնուհետեւ Տրանսիլվանիա, որը 1526-ից մաս էր կազմում Հունգարիային: 1921-ին կնքված Տրիանոնի պայմանագրով այդ տարածաշրջանը փոխանցվեց Ռումինիային: Բազմաթիվ հայեր Բուդապեշտ տեղափոխվեցին, իսկ Տրանսիլվանիայում մնացողները շարունակեցին հունգարերենը օգտագործել որպես մայրենի լեզու: Հայերը շատ լավ էին ինտեգրվել հունգարական հասարակությանը՝ միաժամանակ պահպանելով իրենց էթնիկական առանձնահատկություններն ու ինքնությունը: Մերթ ընդ մերթ նրանց շնորհվել է տեղական ինքնավարություն: Նրանք բազմաթիվ հեղափոխական հերոսներ, ականավոր պետական գործիչներ եւ արվեստագետներ են տվել այդ երկրին: Այնտեղ բնակվող հայերի թիվը տատանվում է 12-15 հազարի միջեւ: Հայաստանից եւ Մերձավոր Արեւելքի երկրներից 2-3 հազարի հասնող նորօրյա ժամանողները ավելացրել են Հունգարիայում ապրող հայերի թվաքանակը: Ի տարբերություն եվրոպական այլ երկրների՝ Հունգարիան ճանաչում եւ պաշտպանում է հայկական փոքրամասնության ինքնակառավարման իրավունքը Բուդապեշտի կոալիցիոն կառավարությունում: Հայերը մեկն են այն 13 էթնիկական խմբավորումներից, որոնք ընտրում են իրենց նախագահին ու ներկայացուցիչներին հունգարական խորհրդարանում:

Եվրոպական միությանը անդամագրվելուց հետո Հունգարիան տնտեսական լուրջ տագնապ ապրեց, որը պատճառ դարձավ, որ տապալվի տեղի սոցիալիստական կառավարությունը եւ ճանապարհ հարթի ծայրահեղ աջակողմյան, «Երիտասարդ դեմոկրատների» կուսակցության համար, որը ջախջախիչ հաղթանակ տանելով ընտրություններում՝ ներկայումս զբաղեցնում է խորհրդարանի մանդատների երկու երրորդ մասը:

Այդ կուսակցությունն այժմ որեւէ օրենք կարող է անցկացնել առանց կոալիցիայի մյուս մասնակիցների պաշտպանության: Վարչապետ Վիկտոր Օրբանի գլխավորած այս կառավարությունն է, որ գործարքի մեջ մտավ Ադրբեջանի կառավարության հետ՝ արտահանձնելու Ռամիլ Սաֆարովին, ազերի արտգործնախարարի այն հավաստիացումներից հետո, թե դատապարտյալ ոճրագործն իր պատժի մնացած չափաբաժինը կանցկացնի ադրբեջանական բանտերից մեկում:

Տնտեսական ծանր ճգնաժամի մեջ հայտնվելով Հունգարիայի կառավարությունը այս ամոթալի արարքին դիմեց՝ հույս ունենալով, որ թուրքական կառավարությունը միջնորդ կհանդիսանա երկու կողմերի միջեւ, եւ Բաքուն Հունգարիայից 3 միլիարդ եվրո արժողությամբ բաժնետոմսեր կգնի: Դա այն «արյան փողն» էր, որ պետք է փոխանակվեր երկու կողմերի միջեւ, այն բանից հետո, երբ Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) մերժել էր Հունգարիայի կառավարության պահանջը՝ ցածր շահութաբաժնով միջազգային շուկա հանել իր բաժնետոմսերը:

Որքան մեզ հայտնի է, Ադրբեջանը դեռ չի կատարել գործարքի իր բաժինը եւ եթե նույնիսկ կատարի հիմա, որոշ ուշացումով, արարքը որպես քաղաքական ռումբ պայթելու է Օրբանի կառավարության լեգիտիմության դեմ: Ընդդիմությունն արդեն իսկ Սաֆարովի գործն օգտագործում է որպես ակնառու փաստ: Հունգարիայի «Կաթոլիկ եպիսկոպոսների կոնֆերանսի» նախագահ Կարդինալ Փիթեր Էրդոն իր հրապարակած հաղորդագրության մեջ «զորակցություն է հայտնում հայ քրիստոնյաներին»: Ժողովրդական համերաշխության հզոր ալիք է բարձրացված Հունգարիայում ի պաշտպանություն հայերի, եւ կարծես կառավարության անխոհեմ որոշումը հարվածելու է հենց իրեն՝ կառավարությանը, այն էլ գոտկատեղից ներքեւ:

Վերջերս Հունգարիայի նախագահ Պալ Շմիտը հրաժարական տվեց դոկտորական թեզերից մեկում գրագողություն կատարելու մեջ բռնվելուց հետո: Նախադեպեր կան, որ բարոյական զայրույթը կարող է քաղաքական պայքարի վերածել Հունգարիայում:

Հստակ է, որ հանցագործը Օրբանի վարչակազմն է: Հունգարիայի ժողովուրդը, ինչպես ավանդաբար, այս դեպքում էլ կարեկցում է հայերին:

Սաֆարովի արտահանձնումը տարբեր մեկնաբանությունների տեղիք տվեց Հայաստանի ներքին քաղաքական դաշտում: Քանի որ նախագահ Սերժ Սարգսյանի վարչակազմը ամբողջովին զբաղված էր առաջիկա նախագահական ընտրություններով, այս հարցը մի փոքր աչքաթող էր արված: Այդ պատճառով էլ նա այժմ վճռական է տրամադրված: Հրավիրելով Ազգային անվտանգության խորհրդի արտակարգ նիստ՝ նա հայտարարեց, որ կասեցնում է դիվանագիտական հարաբերությունները Հունգարիայի հետ:

Այդուհանդերձ, թվում է, թե ճգնաժամը կարող է հաջող ավարտ ունենալ, ինչպես ասում են՝ «չկա չարիք՝ առանց բարիքի»: Հայերի մեծամասնությունը խիստ զայրացած է եւ պատրաստ պաշտպանելու ամեն մի կոշտ գործողություն: Շատ գաղափարներ եւ կարծիքներ են հնչում, որոնցից ամենատարածվածը Հայաստանի կողմից Արցախի ճանաչումն է որպես անկախ պետություն: Սա, ինչ խոսք, լուրջ քաղաքական ռիսկ է պարունակում, քանի որ ազերիներն այդ քայլը կարող են օգտագործել հակամարտությունը վերսին սրելու համար: Հայաստանը չի կարող այդ ռիսկին դիմել առանց Ռուսաստանի համաձայնության: Իսկ լուրեր են տարածվում, որ ազերի մագնատ Իլհամ Ռահիմովը տեղյակ էր պահել իր դասընկեր Վլադիմիր Պուտինին արտահանձնման գաղտնի բանակցությունների մասին: Գուցե դրանով էլ բացատրվում է Ռուսաստանի թույլ արձագանքը կատարվածին:

Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանն է հետաքրքրական առաջարկ ներկայացրել, որը տրամաբանական է, եթե Բուդապեշտի կառավարությունը տրամադիր է մեղմացնելու Հայաստանին պատճառած ցավը: Նա կոչ է անում Հունգարիային՝ ճանաչելու Արցախի Հանրապետության անկախությունը որպես «ամենաարժանի պատասխանը» ներկա իրավիճակի:

Մի բան, որ այդուհանդերձ կարելի է միջազգայնորեն բարձրացնել, այն է, որ հաշվի առնելով ազերի իշխանությունների ռասիստական բնույթը, Արցախի հայությունը այլեւս երբեք չի կարող գոյատեւել այդ իշխանության ներքո, ինչքան էլ «բարձրակարգ ինքնավարության կարգավիճակ» խոստանան նրան:

Այդ իշխանությունների բարբարոսական բնույթը միջազգային հանրությանը լիովին տեսանելի դառնալուց հետո տարածքային ամբողջականության վերաբերյալ տեսությունը պետք է որ դատարկաբանություն թվա որեւէ խելամիտ քաղաքական դիտորդի համար:

Հայաստանի ընդդիմությունն, անշուշտ, բաց չթողեց առիթը ընդգծելու համար ներկա վարչակազմին՝ մեղադրական հարց ուղղելով, թե ինչ՞ էիք, երբ գաղտնի բանակցություններ էին տեղի ունենում:

Հայաստանի արտգործնախարարը բացատրություններ տվեց, նշելով, թե մինչեւ Սաֆարովի արտահանձնմանը նախորդած մի քանի օրը հունգարական կառավարությունը հայկական կողմին վստահեցրել է, որ ոչ մի գործարք էլ չկա:

Եզրակացությունն այն է, որ ազերի կառավարությունը «խաբեց» Հունգարիայի կառավարությանը, որն էլ իր հերթին խաբեց Հայաստանի կառավարությանը:

Սաֆարովի մեղավոր ճանաչվելու առթիվ Ադրբեջանում ծայր առած հիստերիային ականատես լինելով՝ Հունգարիայի կառավարությունը շատ լավ գիտակցում էր իր գործողության հետեւանքները, բայց առանց վարանելու իրականացրեց իր որոշումը՝ ազերի հավաստիացումները օգտագործելով որպես քողածածկույթ հայտարարելու համար, որ «գործել է համապատասխան միջազգային օրենքի սահմաններում»:

Ստեղծված իրավիճակի երրորդ հարթությունը միջազգային հանրության արձագանքն է: Եթե Հունգարիայի ամոթալի արարքից ավելի վրդովեցուցիչ բան գոյություն ունի, դա միջազգային հանրության արձագանքն է, որը ցավալիորեն ցույց է տալիս, որ Հայաստանը մեկուսացված երկիր է, որ քաղաքական դաշնակիցներ չունի, որոնք շահագրգռված լինեն իրենով:

Հարց է, թե որեւէ այլ իշխանական կուսակցություն կկարողանա՞ր ավելին անել, քան այն, ինչ անում է ներկա կառավարությունը, որովհետեւ հարցը քաղաքական աշխարհում համապատասխան կշիռ ունենալուն է վերաբերում, եւ ընդունված «կլիշեն» այն է, որ ազերիի նավթն ավելի արժե, քան հայի արյունը: Ադրբեջանն ու Հունգարիան շատ լավ հասկանում են սա եւ գործել են համապատասխանաբար՝ գիտակցելով, որ հակադարձելու Հայաստանի հնարավորությունները խիստ սահմանափակ են: Ի՞նչ է կորցնում Հունգարիան Հայաստանի հետ դիվանագիտական կապերի կասեցումից: Ոչ շատ բան: Մինչդեռ Բաքվի գործողությունները կամ հակադարձությունները կարող են ծանրակշիռ հետեւանքներ ունենալ:

ԵԱՀԿ Մինսկի խումբը, որը վերջին երկու տասնամյակներում զբաղված է բանակցային դատարկ շրջապտույտներով Ղարաբաղի հարցի առնչությամբ, հանդես եկավ թույլ մի հայտարարությամբ առ այն, որ Բուդապեշտից Բաքու արտահանձնման «խաղը» կարող է բացասական ազդեցություն ունենալ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ շարունակվող բանակցությունների վրա: Ցկա ոչ մի դատապարտում: Ոչ իսկ թեթեւակի քննադատություն՝ կատարված գազանային իրավական խախտման վերաբերյալ:

Եվրոպական միությունը, սովորականի նման, հավասարության նշան դրեց ոճրագործի եւ զոհի միջեւ՝ հորդորելով հանդարություն պահպանել եւ լարվածությունը չսասկացնել:

Հայաստանի ռազմավարական դաշնակից Ռուսաստանն իր արտգործնախարարության համեմատաբար ցածր մակարդակի պաշտոնական ներկայացուցչի միջոցով մտահոգություն արտահայտող մի հայտարարություն արեց, բայց ինքը՝ արտգործնախարար Սերգեյ Լավրովը դեռ պետք է իր խոսքն ասի այդ թեմայի կապակցությամբ: Ալեքսանդր Լուկաշեւիչի հայտարարության մեջ նշվում էր հետեւյալը. «Կարծում ենք, որ ադրբեջանական, ինչպես նաեւ հունգարական իշխանությունների գործողությունները հակասում են միջազգային, առաջին հերթին ԵԱՀԿ Մինսկի խմբի մակարդակով համաձայնեցված ջանքերին եւ տարածաշրջանում լարվածության նվազմանը»: Կատարվածի ո՛չ սահմանում, ո՛չ գնահատական, ո՛չ էլ նկատողություն կամ հանդիմանություն այդ գործում ներգրավված երկու կառավարություններին:

Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանի հայտարարությունը անձամբ նախագահ Վլադիմիր Պուտինից էր պահանջում անհերկմիտ դատապարտում կատարվածի:

Զայրույթն առայժմ ուղղված է Բուդապեշտին եւ Բաքվին: Բայց ծանր պատասխանատվություն կրում են նաեւ ՆԱՏՕ-ի հրամանատարությունը եւ Մ. Նահանգների կառավարությունը՝ որպես այդ կառույցի ղեկավար: Հայերն, անշուշտ, գոհունակությամբ ընդունեցին կոնգրեսականներ Ֆրենկ Փալոնի, Բրեդ Շերմանի եւ Ադամ Շիֆի դատապարտողական խիստ արձագանքը, սակայն դա չի կարող փոխարինել վարչակազմի պատասխանատվությանը:

ԱՄՆ-ի Ազգային անվտանգության խորհուրդն իր հայտարարության մեջ նախագահ Բարաք Օբամայի «խիստ մտահոգությունն» էր արտահայտում արտահանձնման առնչությամբ, որը «հակասում է լարվածությունը թուլացնելու շահերին»: Իսկ պետքարտուղարությունը «չափազանց անհանգստացնող»՝ ավելի որոշակի բառերով էր բնութագրել երեւույթը:

Այս բոլոր հայտարարությունները, սակայն, Մ. Նահանգները կատարում է որպես երրորդ կողմ, մինչդեռ ՆԱՏՕ-ի հետ Ամերիկայի կառավարությունը գլխավոր պատասխանատուն է կատարվածի, քանի որ չէր կարողացել ապահովել սպա Գուրգեն Մարգարյանի անվտանգությունը: Բացի դրանից՝ Մ. Նահանգներն ու ՆԱՏՕ-ն վստահաբար տեղյակ էին ընթացող բանակցություններին եւ կարող էին տեղնուտեղը կասեցնել դրանք: Մի կողմ քաշված մնալով ուրիշներից բացատրություն պահանջելը երկերեսանիություն է պարզապես: Ասվածի էությունից ոչինչ չի փոխում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ռասմուսենի՝ շատ ավելի հստակ եւ հաստատված հայտարարությունը Երեւանում, որը նա գրեթե նույնությամբ կրկնեց Բաքվում: Ահա թե ինչու նախագահ Ս. Սարգսյանը սփոփված եղավ իր երկրի ակնկալությունները առավել հստակորեն արտահայտել Երեւանում հավատարմագրված ԵԱՀԿ երկրների դեսպաններին, շեշտելով, որ նրանց «հավասարակշռված» ամեն մի հայտարարություն Բաքվի իրարահաջորդ գրգռությունների վերաբերյալ, ուժեղացնում է Ալիեւի ռազմատենչությունը:

Հայաստանն, անշուշտ, կարող է հունգարա-ազերիական այս սկանդալից քաղել որոշակի քաղաքական դիվիդենտներ, եթե կարողանա հարցը համապատասխան կերպով միջազգային քաղաքական շուկա հանել: Եթե Մ. Նահանգները չկարեւորեն հարցի կասեցումը՝ սկզբնական փուլում, ապա Հայաստանի կառավարությունը ավելին անել չէր կարող: Բայց հայերին պետք է մեղադրել իրենց տունը եւ երկրի պաշտպանությունը թողնելու այն քշերին, որոնք շարունակում են ապրել հայրենիքում, եւ հեռուներից՝ Մոսկվայից, Եվրոպայից կամ Գլենդեյլից կուրծք ծեծել որպես հայրենասերներ ու կառավարությանը քննադատելու համար՝ որպես իրենց մեղքն արդարացնելու միջոց:

Այո, Ադրբեջանն ու Հունգարիան մեղսակիցներ են այս ոճրագործության մեջ եւ նրանց կարելի է կասեցնել միայն Արցախի սահմանի վրա:

Դետրոյթ, ԱՄՆ

Թարգմ.՝ Հ. Ծ.

«Մահմեդականի արյունով ներկված Աղթամարը կոտրածի կղզի է»

Հայտարարում է թուրք հրապարակը՝ հակազդելու համար Աղթամարի Սուրբ Խաչում նախատեսվող պատարագին

Առաջիկա կիրակի Վանա լճի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցում կմատուցվի հերթական պատարագը: Թուրքական իշխանությունները ջանք չեն խնայում միջազգային ասպարեզում շահարկելու ինչպես Ս. Խաչի վերանորոգումը, այնպես էլ եկեղեցու բացումը ժամերգության համար: Ընդ որում՝ տարեկան 1 or եւ ընդամենը մի քանի ժամով է բացված: Ինչո՞ւ: Հարցի պատասխանը միանշանակ է, որովհետեւ մոտենում է Մեծ եղեռնի 100-րդ տարելիցը:

Անհայտ է, որ Օգյուն Սամասթ կոչեցյալ մարդասպանին փառաբանելն ու մարդասպանով հիանալը անհամատեղելի է ազգային արժանապատվության հետ: Իսկ թանգարանի վերածված եկեղեցու տարին մեկ or մի քանի ժամով ժամերգության բացմանը հակադրվելը՝ առնվազն լկտիություն, ինչը դրսեւորել է «Հայկական անհիմն պնդումների դեմ պայքարի» միության նախագահ Գյոքսել Գյուլբեյը:

Հայաստաց այս տականքը, ինչպես երեկ նշել է «haberfx.net» կայքէջը, Աղթամարի Սուրբ Խաչում նախատեսվող պատարագի առնչությամբ իր գլխավորած միության անունից հայտարարություն է արել: Ահա թե ինչ է ասել. «Ազատագրական պատերազմին նախորդող տարիներին ռուսները սիրված նահանջում էին: Նրանք նահանջելիս, իրենց ձեռի տակ եղած զենքը, զինամթերքը հանձնեցին հայկական ավազակախմբերին: Մահմեդականի արյամբ սնուցվող հնչակյան, դաշնակցական հայ ավազակներն իսկույն գործի անցան, եւ ռուսական զենքով նրանք մահմեդականներին ցեղասպանության ենթարկեցին Անատոլիայում, չխնայելով կանանց, երեխաներին ու ծերերին:

Հայերի սարքած կոտրածից չխուսափեց նաեւ Վանը: Ավազակախմբերը քաղաքից բռնեցին անզեն, անպաշտպան մահմեդականներին: Ժողովուրդը չկարողացավ դիմակայել կոտրածին եւ սկսեց փախչել դեպի Վանա լիճ, եւ լճափին ընկավ հայերի ձեռքը: Այդ պահին ափ մոտեցան լաստանավերը: Թեեւ նավերը պատկանում էին հայ մեծահարուստներին, սակայն ժողովուրդը ճարահատյալ էր, ուստի նստեց: Որտեղի՞ց իմանար, որ բուն կոտրածը հենց լաստանավերում է սկսվելու: Երբ լաստանավերը հասան լճի մեջտեղը, հայ ավազակները, որոնք նախապես թաքնված էին, դուրս գալով թաքստոցից, կոտրեցին բոլոր երեխաներին եւ գցեցին լիճը: Մահմեդականների արյունով ներկված Վանա լիճը դարձավ կաս-կարմիր: Այս անմարդկային կոտրածից հետո հայերն սկսեցին բռնաբարել մահմեդական կանանց, որոնց նրան մղում է հայատյացության: Այսպիսով, հայատյացությունը դառնում է թուրք ոհմակի էությունը: Այն ասիճանի, որ հանուն դրա ոհմակը կարողանում է անտեսել ազգային արժանապատվությունն ու թուրքական պետության շահերը:

Ակնհայտ է, որ Օգյուն Սամասթ կոչեցյալ մարդասպանին փառաբանելն ու մարդասպանով հիանալը անհամատեղելի է ազգային արժանապատվության հետ: Իսկ թանգարանի վերածված եկեղեցու տարին մեկ or մի քանի ժամով ժամերգության բացմանը հակադրվելը՝ առնվազն լկտիություն, ինչը դրսեւորել է «Հայկական անհիմն պնդումների դեմ պայքարի» միության նախագահ Գյոքսել Գյուլբեյը:

Հայաստաց այս տականքը, ինչպես երեկ նշել է «haberfx.net» կայքէջը, Աղթամարի Սուրբ Խաչում նախատեսվող պատարագի առնչությամբ իր գլխավորած միության անունից հայտարարություն է արել: Ահա թե ինչ է ասել. «Ազատագրական պատերազմին նախորդող տարիներին ռուսները սիրված նահանջում էին: Նրանք նահանջելիս, իրենց ձեռի տակ եղած զենքը, զինամթերքը հանձնեցին հայկական ավազակախմբերին: Մահմեդականի արյամբ սնուցվող հնչակյան, դաշնակցական հայ ավազակներն իսկույն գործի անցան, եւ ռուսական զենքով նրանք մահմեդականներին ցեղասպանության ենթարկեցին Անատոլիայում, չխնայելով կանանց, երեխաներին ու ծերերին:

Հայերի սարքած կոտրածից չխուսափեց նաեւ Վանը: Ավազակախմբերը քաղաքից բռնեցին անզեն, անպաշտպան մահմեդականներին: Ժողովուրդը չկարողացավ դիմակայել կոտրածին եւ սկսեց փախչել դեպի Վանա լիճ, եւ լճափին ընկավ հայերի ձեռքը: Այդ պահին ափ մոտեցան լաստանավերը: Թեեւ նավերը պատկանում էին հայ մեծահարուստներին, սակայն ժողովուրդը ճարահատյալ էր, ուստի նստեց: Որտեղի՞ց իմանար, որ բուն կոտրածը հենց լաստանավերում է սկսվելու: Երբ լաստանավերը հասան լճի մեջտեղը, հայ ավազակները, որոնք նախապես թաքնված էին, դուրս գալով թաքստոցից, կոտրեցին բոլոր երեխաներին եւ գցեցին լիճը: Մահմեդականների արյունով ներկված Վանա լիճը դարձավ կաս-կարմիր: Այս անմարդկային կոտրածից հետո հայերն սկսեցին բռնաբարել մահմեդական կանանց, որոնց

ՀԱԿՈԲ ՉԱՔԲՅԱՆ

Օբաման առաջ է անցնում մրցակցից

Հրատարակիչ Փլինտը 1 մլն կտա Ռոմնիի եկամուտները հայտնողին

ԱՄՆ գործող նախագահ, դեմոկրատ Բարաք Օբաման իր մրցակցին՝ հանրապետականների թեկնածու Միթ Ռոմնիին կշտամբել է մաթեմատիկայի թույլ իմացության համար: Ֆլորիդայում կազմակերպված նախընտրական միջոցառումների ժամանակ նա քննադատել է հանրապետականների տնտեսական ծրագիրը: Օբաման տարակուսանք է արտահայտել, թե Ռոմնին ներկայիս վիթխարի պակասորդի դեմ ինչպես է պայքարելու հարկերն իջեցնելու խոստումներով:

«Հանրապետականները չկարողացան պատասխանել այն հարցին, թե իրենք ինչպես են փոխհատուցելու հարկերի կրճատման 5 տրիլիոն դոլարը եւ պաշտպանական ծախսերի կրճատման 2 տրիլիոնը, չբարձրացնելով միջին խավի հարկերը: Դա ոչ թե համարձակ ղեկավարում է, այլ վատ հաշվարկ: Ես դա կգնահատեի ամենացածր թվանշանով: Ես հրաժարվում եմ նման ծրագրից: Մտադիր չեմ միջին խավի ընտանիքներին զրկել բնակավայրից կամ երեխաների ծախսերից՝ հանուն իմ կամ պարոն Ռոմնիի նման մարդկանց արտոնությունների», հայտարարել է Օբաման, որի խոսքերը մեջբերում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:

Դեմոկրատ թեկնածուի քննադատական դիրքորոշումը առայժմ լավ արդյունք է տալիս: Հանրային կարծիքի վերջին հարցումների համաձայն, Բարաք Օբամայի վարկանիշը ներկայումս 49 տոկոս է՝ Ռոմնիի 44 տոկոսի դիմաց:

Ռոմնիի վարկանիշը ցածր է նաեւ այն պատճառով, որ նա ներկայացրել է իր միայն վերջին երկու տարիների եկամուտները, մինչդեռ Օբաման թե՛ 2008-ին եւ թե՛ այս անգամ ներկայացրել է իր վերջին 5 տարիների եկամուտները եւ վճարած հարկերը:

Ամերիկացի հրատարակիչ Լարրի Ֆլինտը 1 մլն դոլար պարգեւավճար է առաջարկել Ռոմնիի եկամուտների վերաբերյալ տեղեկություններ հայտնողներին: Ֆլինտին հետաքրքրում են Ռոմնիի չհրապարակված հարկային հայտարարագրերը, ինչպես նաեւ այն տեղեկությունները, որոնք վերաբերում են նրա օֆշորային ակտիվներին, բանկային հաշիվներին եւ գործընկերներին: Ռոմնիի ակտիվներին վերաբերող տեղեկությունները պետք է լինեն վավերացված, նշվում է պարգեւավճարի հայտարարության մեջ:

CNN հեռուստաընկերությունը հիշեցնում է, որ Ռոմնին հրապարակել է 2010-ի հարկային հայտարարագիրը եւ 2011-ի հարկերի վճարման կանխատեսումը: Նա հանիցս ընդգծել է, որ մտադիր չէ հրապարակել նախորդ տարիների տվյալները, քանի որ դրանք դեմոկրատների քննադատության թիրախ կդառնան:

Իրանի նախկին փոխնախագահը դատապարտվեց մահապատժի

Իրանյան դատարանը փախուստի դիմած նախկին փոխնախագահ Թարիք ալ Հաշեմիին դատապարտել է մահապատժի՝ նրան մեղադրելով «մահվան էսկադրոնների» կազմակերպման մեջ: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:

Ֆրանսպրեսը մանրամասնում է, որ ալ Հաշեմին մեղավոր է ճանաչվել փաստաբանի եւ բրիգադային գեներալի սպանության մեջ:

Բացի ալ Հաշեմիից, մահապատժի է դատապարտվել նրա քարտուղար եւ փեսա Ահմեդ Կախանը:

Թարիք ալ Հաշեմիի ձերբակալման կարգադրությունն արվել էր 2011-ի դեկտեմբերին: Այն ժամանակվանից նա թաքնվում էր իրանյան Քրդստանում, ապա՝ Քաթարում: Ռոյթերի տվյալներով, ներկայումս նա թաքնվում է Թուրքիայում:

2012-ի ապրիլին ալ Հաշեմին եւ նրա թեկնածուները մեղադրվեցին 6 դատավորի եւ բազմաթիվ այլ անձանց սպանությունների մեջ: Մեղադրանքները հիմնված էին գլխավորապես նրա նախկին կողմնակիցների ցուցմունքների վրա: Մեկ ամիս անց Ինտերպոլը նրան ձերբակալելու կարգադրություն արեց՝ կասկածելով ահաբեկչությանը մեղսակից լինելու մեջ:

Ալ Հաշեմին եւ մի շարք դիտորդներ քրեական հետապնդումը կապում են սուննի-շիա հակամարտության հետ: Նախկին փոխնախագահը սուննի է, ներկայիս փոխնախագահ Նուրի ալ Մալիքին՝ շիա: Իրաքում կրոնական հակամարտությունը սրվել է ամերիկյան զորքերի դուրսբերումից հետո:

ՌԴ-ԱՄՆ. այցագրային ռեժիմի մեղմացում

Սեպտեմբերի 9-ից ուժի մեջ է մտել Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի համաձայնագիրը այցագրային արտոնագրի երկկողմանի պարզեցման վերաբերյալ, հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը:

Համաձայնագրով նախատեսվում է Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի քաղաքացիներին եռամյա բազմակի այցագրեր տալ երկրներից յուրաքանչյուրում 6 ամիս անընդմեջ մնալու իրավունքով: Նոր կանոնների համաձայն, Ռուսաստանը գործարար, մասնավոր, հումանիտար եւ զբոսաշրջային այցագրերը կձեւակերպի ըստ քաղաքացիների եւ կազմակերպությունների հրավերների, իսկ ԱՄՆ-ը կձեւակերպի B1/B2 կարգի (գործարարություն (զբոսաշրջություն) այցագրեր: Սպասվում է, որ դրանք կտրվեն փաստաթղթերի հանձնումից հետո 15 օրացույցային օրվա ընթացքում: Ավելի վաղ՝ սեպտեմբերի 8-ին, Ասիա-խաղաղօվկիանոսյան երկրների գագաթաժողովում ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովի հետ հանդիպման ժամանակ նոր երկկողմ համաձայնագիրն անվանել էր «պատմական»:

Ռուսաստանում ԱՄՆ-ի դեսպան Մայքլ Մակֆոլը իր հերթին հայտարարել է, որ համաձայնագիրը «մեծ առաջընթաց քայլ է երկկողմ հարաբերություններում»: Նրա խոսքերով, ԱՄՆ-ը ձգտում է իսպառ վերացնել այցագրերը ռուսաստանցիների համար: 2012-ին ամերիկյան այցագիր են ստացել աննախադեպ թվով՝ 160 հազար ռուսաստանցիներ:

Ասավարս զրույց

Նկարչի հաջողության գաղտնիքը

Ազգային պատկերասրահի 1-ին հարկի սրահում, երբ փորձում էի ճանաչել կտավների գույներն ու հասկանալ ինձ անծանոթ նկարչին, բնավ չէի կարծում, թե ֆիչ անց ունկնդիրն եմ լինելու շատ հետաքրքրական, ստեղծագործական հաջողության առումով հատկապես բնորոշ մի անսովոր կենսագրության: **Զաքար Խաչատրյանը** հրաբալի պատմող է, այս պատումի հմայքը խոսքի արտասովոր անկեղծությունն է, անթաքույց հույզն ու զգացմունքը, պարզ, զուլալ, ինչպես բնությունն ինքը՝ բազմաձայն, բազմախորհուրդ, անակնկալներով ու տարերքներով, որտեղ ամեն ինչ, սակայն, օրինաչափության մեջ է, թվացյալ անկանոնությունն իսկ՝ օրինական:

Բնությունը այս նկարչության հարազատ տարերքն է, որովհետև նկարիչը կտավի առաջ բաց ու անպաշտպան է, ինչպես բանավոր իր խոսքում, իր պատումի մեջ, ինչպես բնության մեջ վազող-արձակ ջուրը:

Փորձում էի պատկերացնել նկարների հեղինակին՝ ինտերնետից քաղած մի քանի կցկտուր տեղեկություններով՝ Հայրենական մեծ պատերազմի մասնակից, բազմաթիվ շքանշանների, մեդալների արժանացած, Բեռլինի մատույցներում ծանր վիրավորված, Ս. Պետերբուրգի նկարիչների վետերանների միության նախագահ, ՌԴ նախագահ Վլ. Պուտինի հետ հանդիպած 88-ամյա նկարչին, երբ հասկացա, որ դրանցով բնավ հնարավոր չէր պատկերացնել նրան այնպես, ինչպես իրականում է:

Մոտեցողը ալեհեր, ճերմակ մորուքով, թեթեւ քայլվածքով, սեւ պորտֆելով միջահասակ անձնավորություն էր, իսկ դեմքին խաղացող բարեհոգի ժպիտը արդեն խոսում էր իր մասին: Վաղեմի ծանոթների պես սկսեցինք զրուցել: Նախ ասաց, որ այսօր (սեպտեմբեր 11) ժամը 14-ին բացվելիք իր Ազգային պատկերացուցահանդեսը նվիրված է Երեւանի մանկավարժական համալսարանի հիմնադրման 90-ամյակին եւ դա իր համար մեծ պատիվ է. չէ՞ որ այս համալսարանում երկար տարիներ աշխատել է՝ Դուկաս Չուբարյանի, Հովհաննես Զարդարյանի եւ ուրիշների հետ:

Մտածում էի, որ կյանքի երկարամյա ճանապարհին արվեստագետը հարուստ հուշեր պիտի որ ունենա եւ չէի սխալվում: Զարմացած լսում էի, թե ինչպես է հնարավոր այսքան դժվարագույն ժամանակների ու դառը կյանքի մասին խոսել այսպես թեթեւ. բառերն ասես փետուրի պես են իջնում, ու չես զգում ժամանակը, չես հիշում, որ վերեւում մեկ ուրիշ սպասող կա նկարչին: Դժվարությամբ է մտաբերում մանկության հիշողությունները՝ 30-ականները, որ ծանր բռունցքի պես իջան նաեւ աշխատավոր հոր ու հորեղբայրների ուսերին, ախտորվեցին այնտեղ, որտեղից վերադարձի ճանապարհ չկար, կամ գրեթե չկար: «Հայրս բազմաշնորհ մարդ էր՝ քարտաշ, պայտագործ, մետաղագործ, պատշար՝ տաղանդավոր ու աշխատասեր: Մտածող մարդկանց էին տանում, այդպես էր: Եղբայրս (քանդակագործ Արտաշես Հովսեփյանը՝ Ալեքսանդր Թամանյանի, Արմեն Տիգրանյանի (Երեւան), Օրբելի եղբայրների (Ծաղկաձոր) արձանների հեղինակը) իրեն է ժառանգել, ես՝ մորս: Մայրս գորգագործ էր, նրա թելերի սանդերի համար ուշքս գնում էր, հատկապես գույների: Բայց մտքովս չի անցել նկարիչ դառնալ, չգիտեի՝ նկարչությունն ինչ է»:

Մոր փխրուն ուսերին է ծանրանում երեխաներին մեծացնելու դժվարին պարտականությունը եւ ինչպիսի՜ տարիներին՝ ռեպրեսիաներ, հետո էլ՝ պատերազմը:

...Մեր դիմաց տանձենին է, այսինքն՝ պատկերասրահի այդ պատին «Աշնանային տերեւներ. տանձենի» կտավն է. գույների հրավառություն, տաք աշնան ջերմություն, տանձենու բույր ու համ: Կենսահորդ գույները թվում են մայրիկի գույնզգույն թելերի հիշողության կծիկն են բացված: Հետո նայում եմ մեկ այլ նկարի՝ «Մայրիկի հավերը»–անցյալի զգացական ինչպիսի՜ տպավորություն:

Բեռլինի մատույցներում վիրավորված զինվորի վերքի ապաքինումը անհնարին էր թվում: Ծանր վիրավորվել էր. գնդակը դիպել էր կրծքավանդակի ձախ մասին՝ սրտի հատվածում: Տարիների հեռավորությունից նկարիչը փրկությունը եւ հետագա հաջողությունները պատահականությանն է վերագրում, իսկ ամենաշատը՝ հավատին. «Ինձ օգնել է մորս հավատը: Փոքր էինք: Ահավոր էն տարիներին Աստծուն հիշելը չլսված բան էր: Մայրս շշուկով տալիս էր Աստծու անունը: Հանելուկ մնաց, ինչո՞ւ էր մայրս ծածուկ արտասանում այդ անունը՝ Հիսուս Քրիստոս»:

«Էն ժամանակ Մաշտոցի պողոտան Սալինի պրոսպեկտ էր կոչվում: Մեր դպրոցը այնտեղ էր, Թերլեմեզյանի տեխնիկումի տղաներն էլ էյուդնիկներով գնում էին այդտեղով: Մի օր հանդիպեցի իմ հայրենակից մի երիտասարդի, Բարիսովկա գյուղից: Այնտեղ մոլոկաններ էին ապրում, հրաշք մարդիկ էին, ժամանակին ախտորվել էին ցարի կողմից: Դուխաբորներ էին, ի՜նչ մաքուր մարդիկ էին, կանայք հագնում էի սպիտակ, տները սպիտակ էին ներկում–ջրի տակ մնաց, ափսո՜ս, այդ գյուղը, բնությունը, տեսնում եք, ինչպես է փոխվում: Ապրել եմ նրանց հետ, իմ մանկության հուշերի լավ տպավորություններն են:

Այդ երիտասարդը հանդիպեց ինձ իր էյուդնիկով: Իմացավ, որ հանրակացարանի պատճառով ուզում եմ երաժշտականը թողնել: «Արի մեզ մոտ, ասաց, մեր դպրոցը հանրակացարան ունի»:

Բայց պիտի ինքնություն տամ, ոչ նկարել գիտեմ, չգիտեմ նկարչությունն ինձ բան է: Ինչ նկարեցի, չգիտեմ: Ասացին՝ պիտի կոմպոզիցիա անես: Կոմպոզիցիան ինչ է, չգիտեմ: Լենինականցի մի տղա, թե՝ «թուղթ ըմ ունե՞ս, տո՛ւր, կոմպոզիցիա քեզի կենեմ»: Ես դարձա ուսանող:

... Նայում էի մի նկարի՝ հնձվորները նստել, մածուն էին ուտում, էդ մածունը էնպես լա՜վ էր նկարված: Մարիամ Ասլամազյանի նկարն էր: Մտածեցի՝ ինձ էլ կսովորեցնեն էսպես նկարել, ուրախացա»:

Լսում, բայց համաձայն չեմ իր հետ, թե բախտը բերել է: Պատկերացնում եմ հանրակացարային պայմանները՝ «դուռ կա, թե չկա, պատուհան կա, թե չկա, կրավատ կա, թե չկա»-ի, եւ դրա հետ իր զարմանալի աշխատասիրությունը. կուրսեցիները բոլորը նկարչական դպրոցից էին եկել, իսկ ի՞նքը. հասցնել է պետք, հավասարվել, սովորել: Եվ ահա տնօրենը դեռեւս ուսումը չավարտած ուսանողին հնարավորություն է տալիս ընդունվել նոր-նոր բացված գեղարվեստի ինստիտուտ: Եվ ռեկտորը՝ էդվարդ Իսաբեկյանը բարձր գնահատական է նշանակում: «Ինչո՞ւ այդ մարդը այդպես բարձր գնահատեց,- գաղտնիքը չիմացա»: Ինստիտուտում արդեն ուսանողների երեւակայությունը սնում էին Լենինգրադի մասին պատմությունները: Քաղաքի անունն անգամ չլսած ուսանողների երազանքն էր ընկնել այնտեղ: Հեքիաթի այդ ջրերով գնացին նրանք՝ 5-6 ուսանող, որոնցից միայն մեկին հաջողվեց ընդունվել Ռեպինի անվան գեղարվեստի ակադեմիա: Սակայն կյանքը կյանք չի լինի, եթե ցույց չտա նաեւ իր մյուս երեսը: Մեկ ամիս չանցած նրան հեռացրին ակադեմիայից. ժողովրդի թշնամու զավակի խարանը դեռ ճակատին էր: Չէր վերացրել անգամ պատերազմը:

«Պատերազմ էր: Մի օր կանչեցին, թե դու լավ սալդաթ ես, լավ ես կռվում, քեզ ընդունում ենք կուսակցության շարքերը: Կոմսոմոլ եղե՞լ ես,- հարցրին, վախից ասացի այո: Չէի եղել, ժողովրդի թշնամին՝ ի՞նչ կոմսոմոլ: Չէ չէի կարող ասել, դա կնշանակեր ճակատից կրակել»:

Չհանձնվեց, չհամակերպվեց հեռացման մտքին, ելք չուներ: Ընկերոջ խորհրդով կարողացավ հանդիպում ունենալ Սմոլնիում բուհերի գծով ինստրուկտորի հետ: Հոգեկան ծանր վիճակ, կորցնելու մովը մեղադրվում էր անձի պաշտամունքի մեջ: Ստալինի մոտ ընկերն էր»: Նկարիչը նրան հիշում է Ստալինի ծխամորճը միշտ բերանին եւ հենց այդպես էլ նկարել է: Այդ նկարը հիմա Գերասիմովի տուն-թանգարանում է:

Կյանքը տարբեր մարդկանց է հանդիպեցնում, որոնք մեկ հաջողության, մեկ անհաջողության պատճառ կարող են դառնալ: Իսկ մայրը... Մայրը կյանքի ամենալուսավոր կերպարն էր: Մոր հորդորով էլ վերադառնում է հայրենիք: Բայց ոչ՝ Երեւան... Մնաց գյուղում, ստեղծեց դպրոց: «Մայրս դպրոցի միակ աշխատողն էր, ես՝ միակ ուսուցիչը: Ուսանողներիցս մեկը Փարավոնն է (Ազգային պատկերասրահի ներկայիս տնօրենը, որը փիչ հեռվից նայում էր, թերեւս անհանգստացած նկարչի երկար բացակայությունից): Սա նրա նկարն է, ցույց է տալիս իր դիմանկարը՝ կտավի դեղին ֆոնին: Ինձ՝ ողբացյալիս, նկարել է շատ ճիշտ»:

«Մարսյան դաշտ. կեսօր», 1993թ.

Չուշացավ նաեւ աշխատանքային հրավերը Երեւանից, Մանկավարժական ինստիտուտից էր, Հովհաննես Զարդարյանն էր. «Այ տղա, վեր կաց արի, հերիք նարդնիկություն անես»:

...Մեր դիմաց «տանձենին» է, գունային վառվռուն մի պատկեր՝ ավանգարդ մոտեցմամբ: Մեզ մոտեցած Փարավոն Միրզոյանն ասում է. «Մեր կողքին է, չենք նկատում իր մեծությունը, մեծ նկարիչ է, մեր դասական նկարչության շարունակողն է՝ Թադեւոսյանի, Կոջոյանի: Տեսեք՝ ինչ հրաշալի է զգում բնությունը, իր նկարներում լույսը, սվերը, գունազգացողությունը, ամեն ինչ կա»:

Մենք խոսում ենք 70-ականներից, երբ ժամանակի գեղարվեստական մտածողության մեջ բեկում առաջացավ, թարմ շունչ բերեցին նորերը, զրուցակցիս բնորոշմամբ՝ բունտարները: «Նախորդ շրջանի հայ արվեստը չի կարելի թաղել: Ավանգարդիստները փորձում էին թաղել: Ասեք նրանցից մեկին՝ հավասար Թադեւոսյանին, Առաքելյանին, Զարդարյանին, Չուբարյանին»:

Ինչպես ամեն մի ճշմարիտ արվեստագետ, Զաքար Խաչատրյանն էլ չի հավատում իզմ-երին, արվեստի ճշմարտությունը իրական ապրումի ու վարպետության միասնության մեջ է տեսնում: Երբ հիշեցնում եմ Էդվարդ Իսաբեկյանի համոզմունքը, թե ամենամեծ շարժումը, փոփոխությունը իմպրեսիոնիստները բերեցին, ոգեւորվում է: «Իմպրեսիոնիզմը ռեալիզմի նոր հենքն է»,- ասում է:

Որքան էլ նրա նկարչությունը դասական արվեստի սկզբունքներով է կառուցված, այնուամենայնիվ Զաքար Խաչատրյանը տպավորապաշտական նկարչության ավանդույթների շարունակողն է: Նա իր զգացողական աշխարհի հարազատ փոխանցողն է, ունկնդիրն ու ակնդիրը բնության շարժի, լույսի արտացոլումների, նրա մոգական ազդեցությունների տեսնողը: Նրա նկարի գույնը թրթռուն ու դինամիկ է՝ լույսի ներգործությամբ պատկերի ընդհանրական բնույթով: Իսկ հաճախ առարկայի որոշակիությունը աղոտանում, ասես իլյուզիայի է վերածվում, եւ իմպրեսիոնիստական մտածողությանը բնորոշ ստեղծվում է կտավի ոչ թե զուտ տարածական, այլ ժամանակային հեռավորություն: Դրան օգնում են գունային կուտակումները՝ լույսի, սվերի, մուգ ու բաց գույների բարդ միակցումները («Զրահեղեղը Լենինգրադում», «Իրիկնամուտ. Սիսիանի եկեղեցին»):

Նկարչի գունային հարաբերակցությունը ժամանակի ընթացքում փոփոխվել է, հարթ, միատոն գույնը (կարմիրը, կապույտը) ավելի հարուստ երանգներ է ստացել, նկարը հագեցրել ոչ միայն գույնի բազմազանությամբ, նաեւ զգացումի, վերապրումի: Երազային ինչպիսի պատկեր է ներկայացնում «Ծովը կեսօրին. Պիցունդա» նկարը: Կապտաճերմակի ասիաճանական անցումների վարպետությունը, ալիքների հանդարտ ծփանքը, ծովի ձայնը դարձնում են իրական, զգայական. որքա՞ն անդորր ու խոհ կա այս նկարում: Քնարականություն ու հույզ կա նրա բնանկարներում, քաղաքային պատկերներում, կանանց դիմանկարներում, իսկ «Ջմեռային գիշերը» մի կատարյալ միրաժ է՝ ճած լապտերների կապտավուն լույսի մեջ:

Ռուսական արվեստի միջավայրում կյանքի մեծ մասն անցկացրած նկարիչը հայ է ու հայկական իր մտածողությամբ: «Եղիշե Թադեւոսյանը,- ասում է,- ուսանելով Ռուսաստանում, լինելով ամենասիրելի նկարիչներից մեկը, Վրուբելի, մյուս առաջավոր նկարիչների ընկերը, մնաց հայ: Ես նրանից եմ սովորել: Իմ ուսուցիչը, հոգեւոր իմաստով, նա է: Ինստիտուտը մեզ ամառային աշխատանքի էր ուղարկում թանգարաններ՝ ընդօրինակումներ անելու: Թադեւոսյանն ինձ մի տեսակ գերում էր, հատկապես՝ գույները: Մորս գորգագործության սանդերքն էի հիշում: Ինչպե՞ս է Թադեւոսյանը ճանաչել, կարդացել բնությունը: Իմպրեսիոնիստը պետք է կարողանա կարդալ բնությունը, հենց այնպես հնարել չի կարող, էդ ունակությունը ներքուստ պիտի ունենա: Էդ տառերը նրանից՝ Թադեւոսյանից սովորեցի: Բայց ակադեմիան չէր թույլատրում: Այնտեղ կային իրենց պայմանական գույները: Դժվարությունն այդ տարիների՝ որ կարողանաս պայմանական գույները հաղթահարել, սովորես նրանց լեզվով ասել, բայց մեջդ պահես քոնը:

Երբ 1956-ին Լենինգրադում իմպրեսիոնիստների ցուցահանդեսը եղավ, ես ազատվեցի, ուրախությանս չափ չկար: Եկա, ակադեմիական իմ աշխատանքը հարյուր կտոր արեցի. կարող էին որպես խուլիգանի ինձ հեռացնել, ի՞նչ իրավունք ունեի քննական աշխատանքը պատռել, բայց արեցի, որովհետեւ չէի կարող չանել: Գտա իմ ճանապարհը»:

Գաղտնիքը հենց սա է՝ սեփական ճանապարհը գտնելը, սեփական ձայնը լսելի դարձնելը. ակադեմիական կրթությունն իր գործն արդեն արել էր, եւ բնությունն իր ներսում էր, ինքը՝ նրա ամենազգայուն ընթերցողն ու հարազատը: Հաջողության մյուս գաղտնիքը իր մարդկայի՛ն բնությունն է, աշխատասիրությունն ու կամքը, այն բարությունը, այն լույսը, որը կրում է նկարիչը իր արյան, իր մաշկի գույնի մեջ, իր հայացքի խորքերում:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Հայ շախմատիստները՝ օլիմպիական եռակի չեմպիոններ

Հայկական շախմատի նոր փառահեղ նվաճումը

1-ին էջից

Օլիմպիադայի ավարտական տուրից առաջ տղամարդկանց մրցաշարում եռիշխանություն էր: 17-ական միավորով առաջատարներն էին Հայաստանի, Չինաստանի եւ Ռուսաստանի հավաքականները, ընդ որում լրացուցիչ գործակիցներով մերոնք 2-րդ տեղում էին, իսկ աղյուսակը գլխավորում էին չինացի շախմատիստները: Վերջիններս իրենց մրցավեճն ուկրաինացիների հետ ավելի շուտ ավարտեցին՝ պարտվելով 1-3 հաշվով: Իսկ դա նշանակում էր, որ չեմպիոնի տիտղոսի համար պայքարն ընթանալու է հայերի եւ ռուսների միջեւ: Լեւոն Արոնյանն արագորեն ոչ-ոքի խաղաց Պետեր Լեկոյի հետ, Գաբրիել Սարգսյանն էլ հաշտություն կնքեց Ֆերենց Բերկեշի հետ: Իսկ ահա 2-րդ խաղատախտակի վրա Սերգեյ Մովսիսյանը հաղթեց Զոլթան Ալմաշիին, ինչը վճռորոշ եղավ: Դրանից հետո Վլադիմիր Հակոբյանը միավորը կիսեց Հուդիթ Պոլգարի հետ: 2,5-1,5 հաշվով տոնած հաղթանակը բավական էր վերջնական հաջողության համար: Ռուսները թեեւ գերմանացիներին հաղթեցին 3-1 հաշվով, սակայն լրացուցիչ ցուցանիշներով զիջեցին հայերին չեմպիոնի տիտղոսը: 18 միավորով 3-րդ տեղը զբաղեցրեց նախորդ օլիմպիադայի չեմպիոն Ուկրաինայի հավաքականը: Չինաստանն ու ԱՄՆ-ը 17-ական միավորով գրավեցին 4-րդ եւ 5-րդ տեղերը: Ադրբեջանը 15 միավորով եզրափակեց լավագույն տասնյակը:

Հայաստանի տղամարդկանց հավաքականի կազմում լավագույն արդյունքը ցույց տվեց թիմի վետերան, 42-ամյա Վլադիմիր Հակոբյանը, որը պարտություն չկրեց՝ 10 պարտիաներում վաստակելով 7,5 միավոր: 10 հնարավորից 7 միավոր վաստակեց Լեւոն Արոնյանը, որն առաջին խաղատախտակի վրա հանդես եկած շախմատիստների մեջ ուժեղագույնը ճանաչվեց ու պարգեւատրվեց ոսկե մեդալով: Վլադիմիր Հակոբյանն էլ արծաթե մեդալի

արժանացավ 3-րդ խաղատախտակի վրա ցույց տված արդյունքով:

Վստահ հանդես եկավ նաեւ Գաբրիել Սարգսյանը, որը մասնակցելով բոլոր 11 պարտիաներին, վաստակեց 7 միավոր: 10 մրցախաղերում իր թիմին 5 միավոր պարգեւեց Սերգեյ Մովսիսյանը, որի հաղթանակը Զոլթան Ալմաշիի նկատմամբ ոսկու արժեք ունեցավ: Տիգրան Պետրոսյանն էլ առաջին 3 տուրերում փոխարինելով իր խաղընկերներից մեկին, թիմին 2,5 միավոր պարգեւեց:

Մեկ անգամ եւս հիշեցնենք հայ շախմատիստների ցուցանիշները. Բոլիվիա՝ 3-1, Բանգլադեշ՝ 4-0, Իսպանիա՝ 2,5-1,5, Ֆիլիպիններ՝ 2,5-1,5, Ուկրաինա՝ 2,5-1,5, Ռուսաստան՝ 2-2, Չինաստան՝ 1,5-2,5, Ուզբեկստան՝ 3-1, Գերմանիա՝ 2,5-1,5, Հոլանդիա՝ 3-1, Հունգարիա՝ 2,5-1,5:

Ի դեպ, Թուրքիան նախապես խոստացել էր, որ օլիմպիադայում հաղթող ճանաչված երկրի պատվին դրոշմանիշ եւ ծրար է թողարկելու:

Վստահ հանդես եկավ նաեւ Հայաստանի կանանց հավաքականը, որը 16 միավորով գրավեց 6-րդ տեղը՝ կրկնելով 2008-ին Դրեզդենում ցույց տված իր լավագույն արդյունքը: Եվ եթե վիճակահանությունը բարեհաճ գտնվեր մեր շախմատիստուհիների հանդեպ ու նրանք նախավերջին տուրում չմրցեին ռուսների հետ, ապա մասնակիցների մեջ միջին վարկանիշով 8-րդը համարվող մեր ընտրանին կարող էր բրոնզե մրցանակակիր դառնալ:

Ավարտական տուրում մեր շախմատիստուհիները 2,5-1,5 հաշվով պարտության մատնեցին լեհերին: Էլինա Դանիելյանն ու Լիլիթ Մկրտչյանը հաղթեցին համապատասխանաբար Մոնիկա Սոչկոյին եւ Իվետա Ռայլիխին: Մարիա Կուրսովան հաշտություն կնքեց Կարինա Ցեպկովսկայայի հետ, իսկ Լիլիթ Գալոյանը պարտվեց Յոլանտա Զավադսկայային:

Մեր թիմում գերազանց հանդես եկան Լիլիթ Մկրտչյանն ու Մարիա Կուրսովան՝ 11 հնարավորից վաստակելով 8-ական միավոր: Էլինա Դանիելյանը 10 հնարավորից 6,5 միավոր վաստակեց: Անհաջող խաղաց Լիլիթ Գալոյանը, որը 9 պարտիաներում միայն 3 միավոր պարգեւեց թիմին: Աննա Հայրապետյանն էլ 3 պարտիաներում 1 միավոր գրանցեց իր օգտին:

Օլիմպիադայի չեմպիոնի տիտղոսը 2-րդ անգամ անընդմեջ նվաճեց Ռուսաստանի կանանց հավաքականը, որը 4-0 հաշվով հաղթելով ղազախներին, 19 միավորով գրավեց 1-ին տեղը: Նույնքան միավոր վաստակած Չինաստանի հավաքականը ռուսներին զիջեց լրացուցիչ գործակիցներով: Բրոնզե մրցանակակիր դարձավ Ուկրաինայի ընտրանին, որը վաստակեց 18 միավոր:

Կլիչկոն հաղթեց տեխնիկական նոկաուտով

Գերծանրքաշային կարգում WBC-ի վարկածով աշխարհի գործող չեմպիոն, 41-ամյա Վիտալի Կլիչկոն հաջողությամբ պաշտպանեց չեմպիոնական գոտին: Մոսկվայում կայացած մենամարտում նա 4-րդ ռաունդում տեխնիկական նոկաուտով հաղթեց Գերմանիան ներկայացնող 27-ամյա Մանուել Չառին: Վերջինս պրոֆեսիոնալ ռինգում առաջին պարտությունը կրեց: Իսկ Կլիչկոյի համար հերթական հաղթանակը 45-րդն էր:

Կլիչկոն մենամարտի սկզբում ավելի ակտիվ էր եւ 2-րդ ռաունդում մրցակցին նոկդաունի ենթարկեց: 4-րդ ռաունդում Կլիչկոյի հուժկու հարվածից հետո Չառի աջ աչքի տակ խոշոր պատռվածք առաջացավ ու արյունահոսություն սկսվեց: Բժիշկներն արգելեցին Չառին շարունակել մենամարտը, որի պատճառով նրան տեխնիկական նոկաուտով պարտություն գրանցվեց: Իհարկե, Չառը դժգոհ էր մրցավարների որոշումից:

«Մոսկվա էի ժամանել մենամարտելու եւ չեմպիոնի տիտղոսը նվաճելու մտադրությամբ: Ինձ ճա-

նաչողները կհաստատեն խոսքերս: Վիտալին չեմպիոն է, նրան շատ եմ հարգում: Սակայն այս մենամարտում նա չհաղթեց: Մենամարտը շահեց բժիշկը: Նա նախ պետք է փորձեր փակել պատռվածքը, սակայն միանգամից դադարեցրեց մենամարտը: Այսօր ես կդառնայի աշխարհի չեմպիոն: Այժմ Վիտալիից ռեւանշի հասնելու հնարավորություն եմ խնդրում: Շնորհակալ կլինեմ, եթե կրկին մենամարտես ինձ հետ», մենամարտից հետո ասել է Մանուել Չառը:

«Մանուելը մենամարտելու մեծ ցանկություն դրսեւորեց: Դա հարգանքի է արժանի: Այսօրվա մրցավեճում բոլոր 4 ռաունդներում էլ ուժեղ էի մրցակցից: Հասկանում եմ Չառի մեծ ցանկությունը կրկին մենամարտելու ինձ հետ: Սակայն հայտնի է, թե որքան մեծ թվով բռնցքամարտիկներ են ցանկանում ինձ հետ մենամարտել: Եթե մենք հաճախ հանդիպենք ռինգում, մյուսներին հերթը չի հասնի», ասել է Կլիչկոն:

ՖՈՒՏԲՈԼ

Առաջադրանքը չկատարվեց

Ֆուտբոլի Հայաստանի երիտասարդական հավաքականին առաջին անգամ հիանալի հնարավորություն էր ընձեռվել պայքարելու Եվրոպայի երիտասարդական առաջնության եզրափակիչ փուլի ուղեգրերի համար: Խմբային մրցաշարի արգելքը հաղթահարելու եւ անցումային խաղերին մասնակցելու համար մեր հավաքականին անհրաժեշտ էր երեկ կայացած ավարտական խաղում հաղթել Չեռնոգորիայի ընտրանուն: Թվում էր, որ դա մեր ֆուտբոլիստներին կհաջողվի, մանավանդ որ մրցակիցը կորցրել էր պայքարը շարունակելու հնարավորությունը: Բացի այդ էլ անցյալ տարի Երեւանում մեր հավաքականը 4-1 հաշվով ջախջախել էր չեռնոգորցիներին: Ցավոք առաջադրանքը չկատարվեց: Դարպասները մնացին անառիկ, իսկ մեր հավաքականը դուրս մնաց հետագա պայքարից:

Նման խաղով բուլղարացիներին չես հաղթի

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականն այսօր Սոֆիայի «Վասիլ Լեւսկի» մարզադաշտում աշխարհի առաջնության ընտրական մրցախաղում ուժերը կչափի Բուլղարիայի ընտրանու հետ: Խաղը կսկսվի Երեւանի ժամանակով ժամը 22.45-ին եւ ուղիղ եթերով կցուցադրվի «Արմենիա» հեռուստաալիքով:

Հայաստանի հավաքականը Մալթայի նկատմամբ տոնած հաղթանակի շնորհիվ ընտրական 2-րդ խմբի առաջատարն է: Բուլղարացիները մեկնարկային խաղում մարտական ոչ-ոքի (2-2) ավարտեցին հանդիպումը իսլանդացիների հետ: Ընդ որում սեփական հարկի տակ կայացած այդ խաղում բուլղարացիներն առաջինն էին բացել հաշիվը, սակայն հետագայում դաշտի տերերը 2 գոլ խփեցին: Դանիայի եւ Չեխիայի հավաքականների մրցավեճում դարպասներն անառիկ մնացին:

Այսօր Հայաստանի հավաքականին լուրջ փորձություն է սպասում: Այն դժգույն խաղը, որ ցուցադրեց մեր հավաքականը Մալթայում, մտահոգության տեղիք է տալիս: Նման խաղով հնարավոր չի լինի հաջողության հասնել բուլղարացիների հետ մրցավեճում: Հանդիպելով լավ կազմակերպված մամլիչ գործողությունների եւ զանգվածային պաշտպանության, մեր ֆուտբոլիստները պարզապես շփոթվեցին ու չգիտեին, թե ինչպես կարելի է գրավել մրցակցի դարպասը: Խաղի ցածր տեմպն էլ ձեռնտու էր մրցակցին: Փոխանակ գրոհներին արագություն հաղորդելու եւ փորձելու մրցակցի պաշտպանությունը ճեղքել եզրերով, մերոնք հաճախակի դիմում էին կենտրոնով կարճ փոխանցումների, պարզ իրադրություններում սխալվում էին, սանդարս դրությունները էլ շատ անհաջող էին իրացնում: Ոչնչով աչքի չընկան մեր հավաքականի առաջատարներ Հենրիխ Մխիթարյանը, Յուրա Մովսիսյանը, Մարկոս Պիզելին, Արաս Օզբիլիսը, որոնք իրենց թիմերում հիանալի խաղ են ցուցադրում, հաճախ են ընդգրկվում լավագույնների շարքում: Իսկ ահա Հայաստանի հավաքականում նրանց խաղը մի տեսակ խամրում է: Գուցե նրանք լիովին չե՞ն ներդնում իրենց ուժերը հավաքականում, նախկին նվիրվածությամբ չե՞ն խաղում: Սրանք հարցեր են, որոնք պատասխաններ են պահանջում:

Իսկ մեր հավաքականի ավագ Սարգիս Հովսեփյանն այս խաղում պարզապես ձախողվեց: Սխալներն այնքան ակնհայտ էին, որ ֆուտբոլասերներից շատերն արդեն գտնում են, որ Հովսեփյանը պետք է հրաժարվեր հավաքականից:

Հարկ է խոստովանել, որ ընթացիկ մրցաշրջանում Հայաստանի հավաքականի ցուցադրած խաղը հեռու է բավարար լինելուց: Եթե ընկերական մրցախաղերում ինչ-որ տեղ դա ներելի է, ապա պաշտոնական մրցումներում նման խաղով հնարավոր չի լինի պայքարել ուղեգրի համար: Սա պետք է լավ գիտակցեն մեր ֆուտբոլիստներն ու փոխեն իրենց վերաբերմունքը հավաքականի հանդիպումների նկատմամբ:

Ճիշտ է, հաղթանակը հաճելի է, կրկնակի ուրախալի է, որ Հայաստանի հավաքականն այս պահին գլխավորում է մրցաշարային աղյուսակը: Սակայն ֆուտբոլասերների համար շատ կարեւոր է նաեւ խաղի որակը: Նրանք ցանկանում են հաճույք ստանալ հավաքականի խաղից, իսկ առայժմ մեր ընտրանու ելույթը միայն դժգոհության տեղիք է տալիս:

Ահա ընտրական մյուս խմբերում գրանցված արդյունքները. Շոտլանդիա-Սերբիա՝ 0-0, Ուելս-Բելգիա՝ 0-2, Խորվաթիա-Մակեդոնիա՝ 1-0, Գերմանիա-Ֆարերներ՝ 3-0, Ղազախստան-Իռլանդիա՝ 1-2, Հոլանդիա-Թուրքիա՝ 2-0, Էստոնիա-Ռումինիա՝ 0-2, Անդորրա-Հունգարիա՝ 0-5, Ալբանիա-Կիպրոս՝ 3-1, Իսլանդիա-Նորվեգիա՝ 2-0, Սլովենիա-Շվեյցարիա՝ 0-2, Ռուսաստան-Հս. Իռլանդիա՝ 2-0, Ադրբեջան-Իսրայել՝ 1-1, Լյուքսեմբուրգ-Պորտուգալիա՝ 1-2, Լատվիա-Հունաստան՝ 1-2, Լիտվա-Սլովակիա՝ 1-1, Լիխտենշտեյն-Բոսնիա՝ 1-8, Մոլդովա-Անգլիա՝ 0-5, Չեռնոգորիա-Լեհաստան՝ 2-2, Վրաստան-Բելառուս՝ 1-0, Ֆինլանդիա-Ֆրանսիա՝ 0-1:

Սերենա Ուիլյամսի հերթական տիտղոսը

Ամերիկացի թենիսիստուհի Սերենա Ուիլյամսը 15-րդ անգամ դարձավ «Մեծ սաղավարտի» մրցաշարերի հաղթող: Թենիսի ԱՄՆ-ի բաց առաջնության եզրափակիչում Ուիլյամսը 6-2, 2-6, 7-5 հաշվով պարտության մատնեց բելառուս Վիկտորիա Ազարենկոյին: Ուիլյամսը 4-րդ անգամ դարձավ ԱՄՆ-ի բաց առաջնության հաղթող: Չնայած պարտությանը, Ազարենկոն պահպանեց թենիսիստուհիների համաշխարհային դասակարգման ցուցակի առաջատարի դերը:

Իսկ տղամարդկանց եզրափակիչը կայացավ երեկ, Երեւանի ժամանակով կեսգիշերին: Չեմպիոնի տիտղոսը վիճարկեցին Նովակ Ջոկովիչն ու Էնդի Մարեյը: Ջոկովիչը կիսաեզրափակիչում հաղթել էր Դավիթ Ֆերերին, իսկ Մարեյը պարտության էր մատնել Թոմաշ Բերդիխին:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

Օրվա հետքերով

ՎիվաՍել-ՄՏՍ-ն հովանավորում է իսկական արվեստի հերթական տոնը Երեւանում

Հայաստանի եւ Իտալիայի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 20-ամյակի կապակցությամբ Երեւանում հանդես եկավ իտալական հանրահայտ «I Solisti Veneti» նվագախումբը: Համերգը կազմակերպվել էր ՀՀ-ում Իտալիայի դեսպանատան կողմից՝ ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ: Համերգի հովանավորներն էին ՎիվաՍել-ՄՏՍ-ն եւ «Ֆեստա Տուր Ավիան»:

«ՎիվաՍել-ՄՏՍ-ն, որպես մշակույթի բարեկամ, նպաստում է մշակութային կյանքի ակտիվացմանը, խրախուսում է համաշխարհային մշակույթի գլուխգործոցների ներկայացումը Հայաստանում եւ աջակցում է միջմշակութային շփումներին: Մեր հարուստ ազգային մշակույթը, եվրոպական մշակութային ընտանիքի մաս կազմելով, էլ ավելի է հարստանում միջմշակութային շփումների միջոցով: Այսօր քսահազ հայաստանցի հանդիսատեսը հնարավորություն կստանա մեկ անգամ եւս հաղորդակցվելու իտալական մեծ մշակույթի գլուխգործոցներին», նշել է

ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

Համերգը նվիրված էր մեր երկրի անկախացումից հետո Իտալիայի եւ Հայաստանի միջեւ պաշտոնական հարաբերությունների՝ 1992 թվականի մարտի 17-ին արձանագրության ստորագրմամբ վերահաստատմանը, ինչն ավելի է ամրապնդել երկու երկրների եւ ժողովուրդների բարեկամական եւ մշակութային կապերը:

«I Solisti Veneti»-ն հայտնի արվեստագետներից կազմված նվագախումբ է, որը մասնագիտացած է վենետիկյան բարոկո երաժշտության կատարման մեջ՝ հայտնի դիրիժոր, մաեստրո Կլաուդիո Շիմոնեի ղեկավարությամբ: Համերգի ծրագիրը, ի թիվս այլոց, ներառում էր Ռոսինիի, Վիվալդիի, Սալիերիի, Պագանինիի, Պոնկիելլիի, Վերդիի ստեղծագործությունները:

Հարգանքի տուրք մաեստրո Օհան Դուրյանին

Հռչակավոր երաժիշտ, մաեստրո Օհան Դուրյանի ծննդյան 90-ամյակին «**Ազգը**» անդրադարձել է մաեստրոյի ծննդյան օրը՝ սեպտեմբերի 8-ին: Այդ օրը, վաղ առավոտից մարդկանց հոսքը չէր դադարում Կոմիտասի անունը կրող մեր մեծերի Պանթեոն: Տարբեր ժամանակների ղեկավարներ, պաշտոնատար այրեր, մտավորականներ, Օհան Դուրյանին սիրող ու պաշտողներ մեկտեղվել էին իրենց հարգանքի տուրքը տալու աշխարհի շատ բեմեր գրաված, նվագախմբեր ղեկավարած մեծ դիրիժորին: Օհան Դուրյան արվեստագետին մեծարանքի ու գոհունակության խոսքեր հղեցին բժիշկ Վահան Վարդապետյանը, մաեստրոներ Հովհաննես Չեքիջյանը եւ Տիգրան Հեքեքյանը:

Սպիտակ ծաղիկներով զարդարված շիրմաքարի շուրջ բոլորը մեկական սպիտակ մեխակ ձեռքներին շարվել էին Տիգրան Հեքեքյանի գլխավորած «Փոքրիկ երգիչներ» խմբի անդամները ու կոմիտասյան երգերի կատարումից հետո խոնարհվեցին մաեստրոյի շիրմաքարի առջեւ եւ այն զարդարեցին ծաղիկներով: Հուզված էր մաեստրո Հեքեքյանը, որն իր խոսքում ասաց. «Մենք չէ, որ պիտի գովաբանենք, մեծարենք մեծ երաժշտին: Աստծուց ստանալով տաղանդ եւ այդ տաղանդը իրագործելու կարողություն, մեծ երաժշտը ամեն օր, ամեն ժամ, յուրաքանչյուր համերգին, փորձին ապացուցում էր իր հանճարեղ լինելը»: Դուրյան մեծահոգի մարդու, հանճարեղ երաժշտի մասին մաեստրո Չեքիջյանն ասաց. «Օհան Դուրյանի անզուգական մեկնաբանությունները նրա խորը երաժիշտ լինելն էին ապացուցում: Նա չէր սիրում միջակություններ եւ մոլեռանդ պաշտպանն էր իր մեկնաբանություններին եւ ուներ իր ուրույն ձեռագիրը: Մի բան, որը շատ կարեւոր է արվեստի մարդու համար: Այն բծախնդրությունը, որ նա ուներ, խոսում էր այն մասին, որ ինքը երաժշտության իսկական մեկնաբան էր, ոչից-գլուխ երաժիշտ, բացառիկ տաղանդ: Մեծություն էր բառի բուն իմաստով, երբ բեմ էր դուրս գալիս, այն միանգամից լցվում էր ու դահլիճը հոտնկայս ծափահարում էր նրան: Շատ-շատերը պետք է օրինակ վերցնեն նրանից, նրա թողած ձայնագրություններից: Մենք հպարտ ենք, որ այսպիսի հայ երաժիշտ ենք ունեցել, որի տեղը թափուր մնաց»: Մաեստրո Լորիս Ճգնավորյանը նույնպես հուզված էր եւ «**Ազգի**» հետ զրույցում ասաց. «Օհան Դուրյանը իսկական արվեստագետ էր, որը իր մեջ խտացրել էր տաղանդ, բարություն, ազնվություն եւ ցավում եմ, որ այսօր նա այլեւս մեզ հետ չէ եւ իրավամբ նրա տեղը դատարկ մնաց»:

Բեմադրիչ-դերասան Նարեկ Դուրյանի համար սիրելի հայրիկի մահը «հիմքի կորուստ էր, դաստիարակության, աշխատանքի, մտածելակերպի ու ամեն առումներով: Հաճախ կեսգիշերին այցելում եմ նրան, երկար կանգնում ու սարսուռը անցնում է երակներովս, երբ իմ խոսքերի պատասխանները չեմ լսում նրանից: Մեծ կորուստ էր ինձ համար հայրիկիս մահը...»: Իսկ տիկին Ալիսը, որը մանկան պես խնամել է նրան, ասաց. «Որքան էլ որ ծանր է կորուստը, սակայն սփոփվում եմ, ու երջանիկ եմ, որ աղրել եմ նման մեծ ու տաղանդավոր երաժշտի, հրաշալի մարդու հետ: Ես նրան շատ եմ սիրել ու հարգել թե՛ իբրեւ մեծ երաժիշտ, եւ թե՛ որպես հրաշալի անձնավորություն, որն իր ողջ կյանքի ընթացքում ոչ ոքի չնեղացրեց: Ափսոսում եմ շատ, որ կորցրի այդ բարի մարդուն ու տեղս չեմ գտնում: Տանը հաճախ նրա հետ խոսում եմ, կարոտում եմ, կիսվում եմ նրա հետ: Այսօր էլ պիտի երեկոյան այս ամենը պատմեմ նրան, չնայած որ նա արդեն երկնքից այս ամենը տեսնում է...»:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Մեկնարկում է «Թումանյանական հեքիաթի օր» փառատոնը

Արդեն 7-րդ տարին է, ինչ Լոռու մարզում անցկացվում է «Թումանյանի հեքիաթի օր» խորագրով տիկնիկային թատրոնների միջազգային փառատոնը, Այս տարի փառատոնը կհյուրընկալի թատրոններ Լիտվայից, Ռուսաստանից, Գերմանիայից, Դանիայից, Իրանից, Վրաստանից, Ֆրանսիայից: UNIMA հայկական կենտրոնի նախագահ Արմեն Սաֆարյանն անդրադառնալով փառատոնին ասաց. «Այս տարի փառատոնին մասնակցելու են նաեւ 3 նորաստեղծ տիկնիկային թատրոններ: Իսկ Չինաստանի Չենդու քաղաքում կայացած UNIMA XXI համաժողովի ժամանակ Հայաստանի պատվիրակությունն առաջարկեց «Տիկնիկները հանուն խաղաղության Միջերկրական ավազանի եւ արաբական աշխարհի երկրներում» ծրագիրը, որն արժանացավ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի հավանությանը»:

Փառատոնին ներկա է Տիկնիկային արվեստի գործիչների միջազգային միության նախագահ Դադի Փուդումջին՝ Հնդկաստանից: «Երեւանը գրի համաշխարհային մայրաքաղաք 2012»-ի շրջանակում կազմակերպվել է Հովհաննես Թումանյանի եւ մի շարք մանկագիրների գրքերի ցուցադրություն: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ այս տարի փառատոնի շրջանակում կանցկացվեն վարպետության եւ տիկնիկագործության դասեր, կգործի տիկնիկների ցուցահանդես:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Կորել է

Գեւորգ Սուրենի Ղազարյանի անհաս ձեռներեցի պետական գրանցման վկայականը Վկայականի համարն է 040463: Համարել անվավեր:

Նկարչական ցուցահանդես

Սեպտեմբերի 11-ին, ժամը 14-ին Հայաստանի ազգային պատկերասրահում (մուտքը՝ Հանրապետության Հրապարակից) կբացվի Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության վաստակավոր նկարիչ, Հայկական պետական մանկավարժական համալսարանի Գեղանկարի ամբիոնի պրոֆեսոր, ակադեմիկոս **Զախար Խաչատրյանի** անհատական ցուցահանդեսը՝ նվիրված Հայկական պետական մանկավարժական համալսարանի հիմնադրման 90-ամյակին:

Ցուցահանդեսի բացմանը ներկա կլինի ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, այլ բարձրաստիճան հյուրեր: Ցուցադրությունը կտեւի մինչեւ սեպտեմբերի վերջ:

Սիրով հրավիրում ենք:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Պարզեցված ընթացակարգի ծածկագիրն է՝ ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԲԱՊՁԲ -2/12

Պատվիրատու՝ Հայաստանի Հանրապետության Դատական դեպարտամենտ պետական կառավարչական հիմնարկը (ՀՀ ԴԴՊԿՀ), որը գտնվում է ք. Երեւան, Վ. Սարգսյան 5 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ՝ երկու տարբեր չափաբաժիններով:

Պարզեցված ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին(մասնակիցներին), սահմանված կարգով կառաջարկվի կնքել

1. «Մասնագիտական համազգեստի (դատավորի պատմուճանի)
2. Խալաթների ձեռքբերման՝ գնման պայմանագիր» (այսուհետս՝ Պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի առանձնացված ստորաբաժանումների կարիքների համար մասնագիտական համազգեստի (դատավորի պատմուճանի) և խալաթների ձեռքբերումը:

Սույն ընթացակարգի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար անհրաժեշտ է այցելել ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ գնումների համակարգ WWW. gnumner.am էլեկտրոնային հասցեով, կամ դիմել Պատվիրատուին՝ «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին՝ ք. Երեւան, Վ. Սարգսյան 5 հասցեով, Գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ Զ. Աբգարյանին (հեռ. 010 511-787) մինչև 19.09.2012 թվականի ժամը 11:00-ն (ոչ աշխատանքային օր լինելու դեպքում դրան հաջորդող աշխատանքային օրը), դրանք պետք է կազմված լինեն հայերեն:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ, ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում 05.10.2012թ.-ին, ժ. 12:00-ին տեղի կունենա «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊ ընկերության (այսուհետ՝ Կազմակերպիչ) կողմից կազմակերպված բաց աճուրդը:

Աճուրդի ընթացքում վաճառվելու է հետեւյալ լոտը՝ «Երեւանի Մաթեմատիկական Մեքենաների Գիտահետազոտական Ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) սեփականության իրավունքով պատկանող ուսումնական մասնաշենքը, որի մակերեսն է՝ 1108.4 ք.մ., աղբանոց՝ 7.3 ք.մ., պարիսպ՝ 139.04 գծմ, հողամաս՝ 0,1750.5 հա: Լոտի գտնվելու վայրի հասցեն է՝ ՀՀ, ք. Երեւան, Հ. Հակոբյան փողոց, թիվ 3/16:

Լոտի մեկնարկային գինը սահմանված է 105000000 (մեկ հարյուր հինգ միլիոն) ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ առկա սահմանափակումները՝ տարածքը վարձակալության պայմանագրի հիման վրա տրված է վարձակալության: Լոտի վաճառքը վարձակալության պայմանագրի դադարեցման հիմք չէ:

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով նախավճար, որը պետք է վճարվի Կազմակերպչի դրամարկղ կամ բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին) սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ 03.10.2012թ. ժ. 16:00-ն, ինչի կապակցությամբ տրվում է աճուրդի վկայական:

Աճուրդն անցկացվելու է դասական եղանակով՝ մեկնարկային գնի բարձրացմամբ: Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, որն առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից:

Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման նաեւ այն դեպքում, երբ աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկացություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման հաջորդ օրվանից մինչեւ 03.10.2012թ. յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 11:00-ից մինչեւ 17:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտին՝ նախապես ստանալով Կազմակերպչի թույլտվությունը:

Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով:

Աճուրդի ացնկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցե:

Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (010) 56-45-13 հեռախոսահամարով:

ՕՐԱԿԱՐԳ

Ս. թ. սեպտեմբերի 14-ին՝ ժամը 14:30-ին, ՀՀ ֆինանսների նախարարությունում (Մելիք-Ադամյան 1) տեղի կունենա ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պարզ ընթացակարգով տրված լիցենզիաների գործողության կասեցման դադարեցման համար եզրակացություններ տվող հանձնաժողովի նիստ:

Օրակարգում՝

«ԱԿՈՒՄԲ ԴԸ ՔԼԱԲ» ՀՁ ՍՊԸ–ին ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.10.2010թ. տրված թիվ ՊԼ-5397 լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ 03.09.2012թ. դիմումի քննարկում:

ՀՀ ֆինանսների նախարարություն

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ
ԱՐՏԱՀԵՐԹ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ
«ԷԿՈՆՈՄԻԿԱ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ» ԿԵՆՏՐՈՆ, Բաղրամյան 24դ, 54-24-81

ԳՈՎԱԶԴԻՐ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 10.9.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: